Azg

26 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2012 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 232(5084)

ISSN: 1829-1651

# Քաղաքականությունից հեռանալու օր

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

Երեկ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում մեկնարկեց փետրվարի 18-ին կայանալիք նախագահական ընտրություններին թեկնածությունների առաջադրումը: Քանի որ գործընթացը տեւելու է մինչեւ հաջորդ տարվա առաջին տասնօրյակը, ապա «**Ազգը**» կանդրադառնա թեկնածուներին, երբ ավարտվի նրանց պաշտոնական գրանցումը եւ հաստատվեն ընտրություններին մասնակից բոլոր թեկնածուները: Նշենք միայն, որ նախագահական ընտրություններին երեք նախագահներից կմասնակցի միայն մեկը՝ գործողը. Ռոբերտ Քոչարյանի գրասենյակի մամուլի խոսնակ Վիկտոր Սողոմոնյանը հայտարարեց, թե ինքը չի կարծում, թե երկրորդ նախագահը կառաջադրվի, այդ մասին են վկայում նաեւ քաղաքական զարգացումները:

Տես էջ 3

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Գիտե՞նք ուրախանալ

Խոսքը չի վերաբերում քեֆ-ուրախությանը, տարբեր առիթներով սարքվող խնջույքներին. մեր պարագայում դրանք սովորաբար ավարտվում են տրամադրության անկմամբ, դեպրեսիայով, առնվազն՝ հոգեմաշ դատարկվածությամբ: Այլ՝ ներքին, մնայուն, անանձնական ուրախությանը, դրական էմոցիաներին, որոնք ճառագայթում են ներսից եւ տարածվում շուրջբոլորը, եւ ցուցանիշ են հոգեկան հավասարակշռության, զվարթության:

Պարզվում է՝ հայերս տխուր ազգ ենք, բացասական են մեր էմոցիաները: Փաստողը մեզ լավ ծանոթ Gellup-ն է, որ օրերս հարցախույզի միջոցով պարզել է աշխարհի 3 ամենաուրախ եւ 3 ամենատխուր ազգերին: Հայաստանը վերջին 3-ի մեջ է՝ Իրաքի եւ, չզարմանաք, Սինգապուրի հետ: Սինգապուրի՛, որն աշխարհում ամենակազմակերպված տնտեսություններից մեկն ունի՝ ՀՆԱ-ի գերազանց ցուցանիշով:

Ուրեմն, ուրախ կամ տխուր էմոցիաները կապ չունեն կենսամակարդակի հետ, եւ այս պարագայում իզուր են «բա սա կյա՞նք է», «բա էս պայմաններում ուրախանա՞լ կլինի», «բա սա երկի՞ր է» փնթփնթոցները: Մանավանդ որ Gellup-ի ընտրած մյուս 3 երկրները ամենեւին էլ աշխարհի ամենահարուստ եւ ամենահանգիստ երկրները չեն, բացառությամբ, թերեւս, Ուրուգվայի: Մյուս 2 երկրներից մեկը լատինամերիկյան Պարագվայն է, մյուսը՝ Էլ Սալվադորը: Տերկություն, բռնություն, հեղաշրջումներ ապրած ժողովուրդներ երկուսն էլ, որոնք կիզիչ արեւի տակ, բանանի ու լոբիի պլանտացիաներում չարքաշ աշխատանքով իրենց հացն են վաստակում: Բայց գիտեն երգել, պարել, սիրել, ձուկ բռնել ու ֆուտբոլ խաղալ: Այլ խոսքով՝ կյանքը վայելել, լավատեսությամբ դիմագրավել դժվարությունները:

Իսկ մե՞նք...

Դուք դիտե՞լ եք, օրինակ, մեր չեյնջերի՝ տարադրամի փոխանակման կետերի աշխատողների՝ Բուդդայի արձանի նման դեմքերը՝ ոչ ժպիտ, ոչ բարեւ, աստծու բարին, ոչ մի էմոցիա: Բանկոմատներն անգամ իրենց գույնով-ձեւերով ավելի արտահայտիչ տեսք ունեն, քան...

Կամ ուսումնասիրե՞լ եք մեր պետական ու քաղաքական գործիչների–քիչ բացառությամբ–դեմքերը: Ժպի՛տն անգամ կիսատ, միշտ մռայլ, ձգված, տանջահար: Կարծես ազգովին պարտք լինենք նրանց:

Կամ նախատոնական այս օրերին ուսումնասիրո՞ւմ եք խանութներում ու շուկաներում տենդագին առեւտրի մեջ գտնվող մեր համաքաղաքացիներին՝ հարուստին թե չքավորին: Ո՞ւր են կրում այդքան: Ինչո՞ւ են այդքան մտատանջվում, որ տոնական սեղանին, օրինակ, բաստուրմա-սուջուխի համար փողը չի հերիքում: Բոլորս էլ գիտենք՝ կարճ ուրախությունից հետո միեւնույնն է՝ մնալու են ծակ գրպաններ, հոգնածություն ու դեպրեսիա:

Հիմա կռահում եմ առարկությունները մեր պատմաբանների ու ոչ պատմաբանների. բա այսքան տառապալից պատմություն ունեցող մեր ժողովուրդը կարո՞ղ է ուրախ լինել: Այո, ճիշտ է, պատմահայր Խորենացին էլ է շարադրել դժբախտությունները մեր, բայց գրել է նաեւ՝ «սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս, արժանի գրոց յիշատակի»: Իսկ դուք ինչո՞ւ չեք, ուսումնասիրում, բարձրաձայնում այդ արիության գործերը, որոնք արձանագրվել են ոչ միայն պատերազմի դաշտում: Ներխուժումներից, պատերազմներից, ջարդերից ու դավաճանություններից բացի մեր նորահաս սերունդներին սովորեցրեք փառավոր գործերը մեր նախնիների, համաշխարհային քաղաքակրթությանը նրանց բերած նպաստը, դրական լիցքեր տվող մեր հին ու նոր գործերը:

Այսօր էլ, ինչպես ժամանակին Վահան Թեքեյանն է ասել, մեր ժողովուրդը պետք ունի հպարտության: Նրան տա՛նք այդ հպարտությունը առանց ազգային սնապարծության եւ առանց չափազանցությունների: Եվ այն ժամանակ բոլորս կսովորենք նաեւ ուրախանալ. ինքնավստահությամբ, լավատեսությամբ, դրական էմոցիաներով լեցուն:

Մինչ այդ՝ շնորհավոր Նոր տարի եւ Ս. Ծնունդ:

Հ. ԱՎԵՏԻՔՅԱՆ



## ԱԺ նախագահն ընդունեց ՌԱԿ ներկայացուցիչներին

**Դեկտեմբերի 25-ին ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանն ընդունեց Ռամկավար Ազատական կուսակցության ներկայացուցիչներին՝ ատենապետ Հակոբ Ավետիքյանի գլխավորությամբ:**

**ՌԱԿ ատենապետը ԱԺ նախագահին ներկայացրեց կուսակցության առաջիկա ծրագրերը Հայաստանում եւ Սփյուռքում: Պարոն Ավետիքյանը նշեց, որ ՌԱԿ Հանրապետական վարչության ընդլայնված նիստում որոշում է կայացվել առաջիկա նախագահական ընտրություններում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի թեկնածությունը պաշտպանելու եւ ընտրությունների ընթացքում նրան սատարելու մասին: ԱԺ նախագահը շնորհակալություն հայտնեց ՀՀԿ թեկնածուին պաշտպանելու համար: Հովիկ Աբրահամյանի գնահատմամբ՝ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի գլխավորությամբ իրականացվող ներքին եւ արտաքին քաղաքականությունը նպատակաուղղված է երկրի կայուն եւ աստիճանական զարգացմանը եւ հասարակության մեծամասնությունը ավելի ու ավելի լավ է հասկանում դա: ԱԺ նախագահի համոզմամբ՝ հասարակական այդ ընկալման լավագույն արտահայտությունն են լինելու առաջիկա նախագահական ընտրությունների արդյունքները: Երկուստեք կարեւորվեց արդար եւ թափանցիկ ընտրությունների անցկացումը:**



**Հանդիպման ընթացքում քննարկվեցին ներքաղաքական, ՌԱԿ-ԱԺ համագործակցությանը վերաբերող եւ երկկողմ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:**

*ԱԺ մամուլի գրասենյակ*

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## Ռամկավար Ազատական կուսակցությունը աջակցում է նախագահ Սերժ Սարգսյանին

ՀՀ գործող նախագահ Սերժ Սարգսյանը երկրի կառավարումն ստանձնեց ՀՀ-ում եւ տարածաշրջանում ստեղծված քաղաքական դժվարին ժամանակաշրջանում, երբ երկրում առկա էր լարվածություն, երբ համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հետեւանքով տնտեսական հետընթաց էր արձանագրվում ՀՀ-ում, իսկ տարածաշրջանը՝ վրաց-ռուսական պատերազմի եւ Մեծ Մերձավոր Արեւելքում սկսված վերիվայրումների հետեւանքով հայտնվել էր նոր հակասությունների առջեւ: Այս պայմաններում ՀՀ նախագահը սկսեց համարձակ բարեփոխումների քաղաքականություն վարել թե՛ ՀՀ-ում տնտեսական իրավիճակի կայունացման եւ զարգացման, եւ թե արտաքին քաղաքականության բնագավառում՝ հարեւանների հետ հարաբերությունների բարելավման ուղղությամբ:

Քաղաքական այդ ուղին միշտ չէ, որ ողջունվել եւ խրախուսվել է հայաստանյան քաղաքական ուժերի կողմից: Սակայն մեր կուսակցության համար հստակ է, որ սկսված համարձակ եւ խորքային բարեփոխումներով է միայն հնարավոր հասնել ՀՀ-ի հետագա զարգացմանը եւ տարածաշրջանում խաղաղության, կայունության ապահովմանը:

ՌԱԿ-ը վստահ է, որ ՀՀ-ի հետագա զարգացման ու հզորացման համար շատ կարեւոր է քաղաքական այդ ուղու շարունակականությունը: ՌԱԿ-ը կարեւորում է նաեւ տարածաշրջանում անվտանգության եւ խաղաղության պահպանման գործում ՀՀ նախագահի անմիջական եւ շարունակական ջանքերը: Ղարաբաղյան հարցում Սերժ Սարգսյանի վճռական եւ խելամիտ դիրքորոշումը կարեւոր երաշխիք է երկու հայկական պետությունների անվտանգության եւ բնականոն զարգացման համար:

Սերժ Սարգսյանի նախագահության տարիներին նոր որակ ստացան ՀՀ-Սփյուռք հարաբերությունները, ինչը նոր թափ ու վստահություն հաղորդեց եւ հնարավորություն տվեց սփյուռքահայությանը ավելի մեծ ներդրում ունենալ Մայր հայրենիքի կայացման գործում: Նախագահը վայելում է նաեւ Սփյուռքահայության մեծ մասի վստահությունը, ինչը կուսակցությանը հուշում է, որ գործող նախագահը ընկալվում է ոչ միայն Հայաստանի՝ այլեւ որպես համայն հայության նախագահ:

Տես էջ 3

ԱԶԳ

## Ընթացիկ

# Տարվա սկզբին ու վերջին

Տարին միստիկ խորհուրդ ուներ իր մեջ՝ վիշապի տարին աշխարհի վերջի լեգենդները հրապարակ նետած բիզնես-պլանում ռեպտիլոիդների բացասական էներգիայի կրողն էր: Սակայն, փառք Աստծո, հերթական լեգենդը հաղթահարեցինք, ու ողջ մնացինք, տարոսը հաջորդ լեգենդը վերապրողներին: Ու վիշապի անկանխատեսելիությունից հանձնվում ենք օձի հանգիստ, հավասարակշռված, իմաստնության նշանի ներքո վարքագծին, հուսով ենք՝ խիստ պայմանականնշանային մտածողության այս իներցիան, այնուամենայնիվ, կաբստրահիվի իրական կյանքում, որպես անհաս մարդկանց պատկերացումների հավաքական մտքի նյութականացում :

Քաղաքական տարին սկսվեց «Ժառանգության» եւ ՀՅԴ-ի՝ խորհրդարանական կարգը վերացնելու նախաձեռնությամբ՝ խորհրդարանական ընտրությունների նախաշեմին, ավարտվեց համարյա նույն նախաձեռնությամբ՝ ԲՀԿ-ի, ՀՅԴ-ի եւ մյուս ընդդիմադիր ուժերի նախաձեռնությամբ: Երկու դեպքում էլ ՀՀԿ-ն իշխանություն էր:

«Ազատ դեմոկրատների», Վարդան Օսկանյանի հայտնություն, խորհրդարանական ընտրությունների աժիոտաժ. այն ժամանակ ԲՀԿ-ն խաբս տվեց այնպես, որ ընդդիմությանը թողեց շփոթմունքի մեջ, վերջիններս այդպես էլ դաշինք չկազմեցին, ընտրողի քվեն մանրատվեց, եւ այսօր ունենք այս խորհրդարանը, որտեղ ՀՀԿ-ն եւ ՕԵԿ-ը միասին կարողանում են անցկացնել բոլոր օրենքները, որոնք իրենց պետք են: Ընդհանրապես՝ տարվա առաջին կեսի խորհրդարանական ընտրությունները կանխորոշեցին շատ բան՝ եւ քաղաքական դաշտի հետագա աղավաղումը, եւ ԲՀԿ-ի ներկա ճակատագիրը, եւ ՀԱԿ-ի տարեվերջյան անհետացումը քաղաքական դաշտից: Չնայած ԲՀԿ-ն, տարվա առաջին կեսին խորհրդարանական ընտրությունների վստահ հայտի համեմատ, տարեվերջին նախագահական ընտրություններում թեկնածու չառաջադրելով եւ ոչ մեկին չպաշտպանելով՝ սպառնալիք ստեղծեց իր ապագայի հանդեպ, սակայն այս ուժի հետ կապված ինտրիգի ինչ-որ մաս, այնուամենայնիվ, մնում է չպարզված՝ նախագահական ընտրութունների առումով:

Սակայն այս անգամ լուրջ-լուրջ վերլուծությունների փոխարեն՝ այս տարեվերջին առաջարկում ենք սոսկ պարզ համեմատություն, ինչն առավել ակնառու կցուցանի տարվա իրադարձահոսի պատկերը:

Եվ այսպես՝

Տարվա սկզբին իշխանական կոալիցիան եռակողմ էր, տարեվերջին՝ երկկողմ:

Տարվա սկզբին «Ժառանգությունն» ու ՀՅԴ-ն էին խոսում խորհրդարանական համակարգին անցնելու անհրաժեշտությունից, տարեվերջին՝ ԲՀԿ-ն ու մյուսները, «խորհրդարանական համակարգ» բառերը, կարելի է ասել, տարվա հերոսներն էին:

Տարվա սկզբին Օսկանյանը կողմնորոշվում էր՝ ո՞ւմ հետ քաղաքականություն վերադառնա, կողմնորոշվեց դեպի ԲՀԿ, տարվա վերջին զղջացել է դեպի ԲՀԿ կողմնորոշվելու եւ այդ պատճառով քրեական գործ շալակելու համար:

Տարվա սկզբին ՀԱԿ-ը դեռ հույս ուներ գեներացնել ընդդիմադիր զանգվածներին, տարվա վերջին ՀԱԿ-ը մահացավ (կներեք փոխաբերության համար):

Տարվա սկզզբին ոնց ուրվագծվում էր Քոչարյանի ուրվականը, տարվա վերջին նույն կերպ շարունակում է ուրվագծվել:

Տարվա սկզբին խորհրդարանն էթիկայի հանձնաժողով չուներ, տարվա վերջին ունի՝ եւս մի թամաշաշատ սուբյեկտ:

Տարվա սկզբին ՀՀԿ-ն ու ԲՀԿ-ն ախպեր էին, տարվա վերջին իսկի հեռու ազգական էլ չեն, տարվա սկզբին ԲՀԿ-ն իշխանական էր, տարվա վերջին՝ ընդդիմադիր, տարվա սկզբին դեռ դիմում էին գրում ԲՀԿ մտնելու համար, հիմա դիմում են գրում ԲՀԿ-ից դուրս գալու համար:

Տարվա սկզբին ԲՀԿ-ն էր օրենք տապալում խորհրդարանում («Կանխիկ գործառնությունների սահմանափակման մասին»), տարեվերջին ՀՀԿ-ն է ընդդիմության, այդ թվում ԲՀԿ-ի նախաձեռնած նիստը տապալում:

Տարվա սկզբին Սամվել Նիկոյանն էր ԱԺ նախագահ, տարվա վերջին՝ Հովիկ Աբրահամյանը:

Տարվա սկզբից քաղաքական դաշտի ֆավորիտ էին Տեր-Պետրոսյանն ու Ծառուկյանը, հիմա ոչ մի բանի ֆավորիտ չեն:




Տարվա առաջին հատվածում երկրի նախագահն ասում էր՝ «Էս երկիրը երկիր է», տարվա վերջում՝ «Սա Հայաստանն է, ու վերջ»:

Տարվա սկզբին Մաշտոցի պուրակն էր երկրի գլխավոր հասարակական հարթակը, տարվա վերջում՝ ֆեյսբուքը:

Տարվա սկզբում Վարդան Ղուկասյանն էր Գյումրիի քաղաքապետը, տարվա վերջում՝ Սամվել Բալասանյանը:

Այս օրերին մոդա է զանազան թոփ տասնյակների հորինումը, նախապես մենք էլ ուզում էինք կազմել 2012-ի մեր ընկալած քաղաքական թոփ տասնյակը, սակայն ավելի խոր մտածելով՝ մեր քաղաքական գործիչներից ամենից տարբեր առիթներով ու պատճառներով աչքի ընկածների համար մոգոնեցինք մեր անվանակարգերը: Ահա դրանք, արեք դրանց հետ՝ ինչ ուզում եք.

Ամենից շատ լուսաբանվածը՝ Գագիկ Ծառուկյան:

Ամենից անհաջողակը՝ Վարդան Օսկանյան:

Ամենից շատ հումոր անողը՝ Գալուստ Սահակյան:

Ամենից բարկացածը՝ Նաիրա Զոհրաբյան (բոլոր քննադատողներին իրենց տեղը դնելու պատճառով):

Ամենահավասարակշիռը՝ Սերժ Սարգսյան:

Ամեներկար լռողը. այս անվանակարգում կարող են մրցակցել Տեր-Պետրոսյանն ու Ծառուկյանը (հասկապես վերջինը):

Ամենից ուրբաթախոսը կամ ուրբաթագիրը՝ Ռոբերտ Քոչարյան:

Ամենից շատ արձագանքողը՝ Էդուարդ Շարմազանով:

ԱԺ-ում ամենից շատ խոսողը՝ Արծվիկ Մինասյան:

Սարերն ամենից հաջող շարժածը՝ Րաֆֆի Հովհաննիսյան:

Ամենաընդդիմախոսը՝ Նիկոլ Փաշինյան:

Ամենաուրախը՝ Դավիթ Հակոբյան:

Ամենադասախոսողը՝ Տիգրան Սարգսյան:

Ամենահոռետեսը. այս անվանակարգերի նախնական մրցույթում հաղթողները շատ էին, առաջին տեղ ոչ մեկին չտվեցինք:

Ամենամոռացվածը՝ Ստեփան Դեմիրճյան (առողջություն նրան)

Ամենախաբվածը՝ կրկին Վարդան Օսկանյան:

Ամենասկանդալայինը՝ Վարդան Ղուկասյան եւ Ռուբեն Հայրապետյան:

Ամենաարեւմտյանը՝ Ալիկ Արզումանյան:

Ամենառուսամետը՝ Արտաշես Գեղամյան:

Ամենաբողոքավորը՝ Սուրեն Զոլյան:

Ամենավերահսկվածը՝ Վազգեն Խաչիկյան:

Ամենաէպոսայինը՝ Վարդան Սեդրակյան

Ամենագաղտնալսվածը՝ Լեւոն Զուրաբյան:

Ամենազգեղեցկացվածը՝ Անուշ Սեդրակյան:

Ամենագցվածը՝ Հմայակ Հովհաննիսյանը (չնայած՝ մազ մնաց Րաֆֆի Հովհաննիսյանին էլ այստեղ տեղադրեինք):

Ամենատանջվածը՝ հայ ընտրողը (նա եւս հայոց քաղաքական համակարգի մաս է):

Անենաուրախ, չաղ ու բախտավորը՝ Սամվել Ալեքսանյանը (վայ, նա քաղաքական գործիչ չէ, մոռացանք):

Ամենացավալի դեպքի մասնակիցը, ով փոխեց հասարակությանը՝ Վահե Ավետյան (հետմահու եւ այն պատճառով, որ կյանքի գնով ավելի շատ բան արեց մեր հասարակության համար, քան մեր քաղաքական գործիչները):

Տարվա հակահերոսի տիտղոսին հավակնում է միանգամից մի քանի մարդ, վանդակը լրացրեք ինքներդ:

Վերը թվարկված գործիչները տարբեր մոտիվացիաներով շատ են երեւացել հասարակությանը՝ ըստ մեր այս դասդասման:

Շարքը շարունակեք ինքնուրույն:

Իսկ ընդհանուր առմամբ՝ ընթերցողի ներողամտությունն ենք հայցում, որ «**Ազգի**» նախաամանորյա վերջին համարում փոխանակ խոսեինք հասարակ հայ մարդու իղձերի ու ցանկությունների մասին, նրան կրկին տարանք մեր ծանծաղացած ու ձանձրալի դարձած քաղաքական դաշտի լաբիրինթներով: Երեւի թե պիտի խոսեինք լուսավոր մարդկանց ու լուսավոր կերպարների մասին, ազգ ու հայրենիք պահող սովորական հայ մարդկանց հոգսի, ապագա ուղղված նրանց հայացքի, նրանց դժվար ապրուստի ու դեռեւս չկորցրած հույսի մասին:

Կվերադառնանք 2013-ին ու այդ մասին կպատմենք: Շնորհավոր Ամանոր: Մի կորցրեք հույսը, որ մարդկային կյանքի շարժիչ ուժն է, թող նոր եկողը հուսառատ եւ խոստումն ուղղող տարի լինի բոլորիս համար, մեր երկրին էլ՝ խաղաղություն եւ զարգացում:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

---

ՀՐԱԺԵՇՏԻ ԽՈՍՔԵՐ

# Տարեմուտի կամիքներ

## *2013. Անհնարինն ակնհայտ դարձնելու տարի*

2012-ն իր անցած տաք ու սառն օրերով հայաստանաբնակների մի զգալի մասի համար այդպես էլ հիշարժան չի դառնում: Դե, տարի էր, ինչպես նախորդը, անկոչ հյուրի պես եկավ ու գնաց, վերհուշի առումով ոչինչ չթողեց: Թերեւս հիշվողը Սարկոզի անունն էր, որով իր զավակին կոչեց գյումրեցի մեր հայրենակիցը: Սա տողերիս հեղինակի դիտարկումը չէ, այլ ընկերոջս 30-ամյա տղայինը, որը հարկ է որ առավել տպավորիչ հիշողություններ ունենար. սա՝ իմիջայլոց: Անցնող տարվա քիչ թե շատ հիշարժանը կապված է արդեն նրա ընկերոջ կողմից իր առաջնեկի անվանակոչման հետ. Սկեսուր: Երբ հետաքրքրվել է, թե ինչու են հատկապես այդ անունն ընտրել, ընկերը բացատրել է, թե ընտրությունը կապված է կնոջ եւ իր մոր միջեւ տիրող ջերմ հարաբերությամբ: Պատկերացնել կարելի է, թե ինչպես է տատիկն իր հասակակիցներին երդվելու, թե իր «Սկեսուրիկ»-ին ինչքան շատ է սիրում, իսկ երիտասարդ մայրը լացող փոքրիկի տուտուզիկին տալով բարկացած «Սկեսուր, ձայնդ կտրիր» խոսքերն արտասանելու: Բայց առավել տարօրինակն այն է, որ երբ ընկերը տարակուսել է, թե երեխան մի՞թե տղա չէ, հայրը հանգիստ պատասխանել է՝ իհարկե տղա է:

Երբ այս մասին պատմեցի ծանոթներիցս մեկին, հարցրեց, թե մերօրյա Հայաստանում ի՞նչը կարելի է անհավանականների շարքին դասել: Ասենք, երշիկեղենի մեջ մսի 16 տոկոս պարունակությո՞ւնը, դիետիկ հացը սուրճի նստվածքի օգնությամբ պատրաստե՞լը, պանիրն անվտանգ սնունդ համարե՞լը, թե՞ ատոմակայան կամ Հայաստան-Իրան երկաթգիծ կառուցելը, նավթավերամշակման գործարան հիմնելը, Գյումրին տեխնոքաղաք դարձնելը... բայց վերադառնանք անցնող տարվան, մեր առօրյային:

Նոր հարեւան ունեցանք, անունը Պետրոս: Անկեղծ ասած, չգիտեմ՝ ինչ հնչեղ ազգանուն էլ նա ունենա՝ ասենք Աղազարյանից մինչեւ Արյան, այս անվան հանդեպ վերաբերմունքս դրական չէ: Այն կապված է 50-ամյա վաղեմության մի դեպքի հետ, երբ դասարանցիս ոտքով հարվածեց փողոցի փոքրիկ փիսիկին: Տասնամյակներ շարունակ Պետրոսին նմանեցնում էի ՆԱՏՕ-ի հետ, որն ուզում էր կործանել մեր սիրելի ԽՍՀՄ-ը: Հիմա, ճիշտ է, այլ ժամանակներ են, բայց մեր նորօրյա հարեւանն էլ հարեւաններիս հանդեպ է տեռորի դիրքորոշում ընտրել: Մեկ երիտասարդներին է հանդիմանում, թե ինչո՞ւ են 15 տարվա «Օպել»-ով շրջում, մեկ տեսար ծերերին կպավ, թե ինչո՞ւ են մինչ կեսգիշեր բակում զրույցի տրվում, այլեւայլ դիտողություններ անում: Հեր օրհնած, քեզ երգիծաբանի տեղ ես դրել, գյուղական ակումբներում երեխաներին ես ծիծաղացնում, հետն էլ քո պահվածքով մեզ բոլորիս զայրացնում: Մեր այսօրվա վիճակում սիրել-չսիրելը որն է, երբ մեզ ազգովին հանրային հանգստություն է անհրաժեշտ, եթե երկրում չի ստացվում, թող գոնե մեր բակում լինի, մեր շքամուտքում, մեր հարթակում: Հայտարարել է, թե հանրային պահանջ կար, որ ինքը Ազգային ժողովում լինի, դե պահանջվածն այս անգամ հայտնի աներորդին դուրս եկավ, ինքն ուրեմն պարտադրված փետրվարյանին կմասնակցի, բազմաբնակարան շենքն իր ներկայացուցիչը հարկ է որ ունենա համապետական միջոցառմանը: Բազմակարծության ժամանակներ են, մեր շենքն ումի՞ց է պակաս, որ հավակնորդ չունենա: Անունդ փոխել եմ, Պետրոս, որ չսիրողներդ քեզ աչքով չտան:

Հայաստանյան միջավայրում որեւէ մեկը դժվար հերքի, որ շարադրված համեստ կենցաղային դրվագներից մինչեւ քաղաքական հռետորաբանության այլկերպ դրսեւորումները 2012-ի մեր առօրյայում տեղ չեն գտել, որ դրանք վախվորածի ու հոռետեսի երեւակայության արդյունք են: Նայելով մեր շուրջբոլորը, վերհիշելով անցած օրերը, դրանք հիմնականում գնահատում ենք մարդու մեր տեսակին անարժան ու անպատվաբեր, եթե այլ, առավել խիստ գնահատական չտանք: Բայց յուրաքանչյուրս նաեւ վստահ է, որ դա չէ մեր կերպին հատուկն ու սազականը, առավել եւս՝ արժանին: Թերեւս մեն-մի բանում միակարծիք ենք՝ հայերիս օրրանը, որը մեր նախնիները դրախտավայր են հռչակել, այսօր առավել է պետք մեզ արժանապատիվ բնակատեղի դարձնել, մեր ջանքերով ու մեր աշխատանքով: Ուստի՝ 2013-ը դիմավորենք պարզ ու հասարակ այս ցանկությամբ ու մտադրությամբ:

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ

# Ալժիրի պատվիրակությունը Երեւանում

**Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանի հրավերով ս.թ. դեկտեմբերի 26-28-ը Երեւանում կգտնվի Ալժիրի Հանրապետության անվտանգության խորհրդի քարտուղար, Ալժիրի նախագահի անվտանգության եւ անդրազգային ահաբեկչության դեմ պայքարի հարցերով հատուկ խորհրդական Մուհամեդ Կամել Ռեզագ Բառայի գլխավորած պատվիրակությունը: Պատվիրակության կազմում է նաեւ Հայաստանում Ալժիրի արտակարգ եւ լիազոր դեսպան Սմայիլ Շերգին (նստավայրը՝ Մոսկվա):**

**Այցի ընթացքում նախատեսվում են ալժիրյան պատվիրակության հանդիպումները ՀՀ նախագահի, ԱԱԽ քարտուղարի, ՀՀ պաշտպանության նախարարի, ոստիկանապետի հետ:**

**Արթուր Բաղդասարյանի եւ Մուհամեդ Կամել Ռեզագ Բառայի առանձնազրույցին կհաջորդի ընդլայնված կազմով հանդիպումը, որի ընթացքում կքննարկվի անվտանգության ոլորտում հայ-ալժիրյան երկկողմ համագործակցությանը վերաբերող հարցերի լայն շրջանակ:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

## Անցուդարձ

# Կարեւորներն ու անհրաժեշտը 2012 տնտեսական տարում



2012-ը Հայաստանի տնտեսության համար ընդհանուր առմամբ կարելի է հաջող համարել, եթե հաշվի առնենք մի քանի հիմնական գործոններ՝ տնտեսական համեմատաբար բարձր աճ, որն ամենայն հավանականությամբ կլինի 6,5 տոկոսի շրջակայքում, տնտեսության իրական հատվածի՝ արդյունաբերության եւ գյուղատնտեսության ավելի բարձր աճ եւ այդ ամենի ֆոնի վրա ցածր գնաճային միջավայր: Ընդգծենք, որ ասվածն առնչվում է տնտեսության վիճակին, որի անդրադարձը բնակչության սոցիալական կացությանը սովորաբար ավելի ուշ է սկսվում նկատվել: Հիշեցնենք, 2000-ականների երկնիշ տնտեսական աճի տարիները, երբ դրա անդրադարձը բնակչության վրա սկսեց երեւալ միայն մի քանի տարի հետո եւ որի արդյունքում աղքատ բնակչությունը 51 տոկոսից նվազեց եւ 2008-ին հասավ մինչեւ 24-25 տոկոսի: Սակայն 2008-2009-ի համաշխարհային տնտեսական ճգնաժամը ծանր անդրադարձավ ինչպես տնտեսության, այնպես էլ բնակչության սոցիալական վիճակի վրա, որի արդյունքում աղքատության ցուցանիշն այսօր Հայաստանում կազմում է 34-35 տոկոս:

Այդուհանդերձ, ներկայիս տնտեսական աճը նախկինից տարբերվում է նրանով, որ այն տեղի է ունենում իրական հատվածի՝ արդյունաբերության եւ գյուղատնտեսության շնորհիվ, որ այն միայն մեկ ճյուղի շնորհիվ չի տեղի ունենում եւ որ ավելի համակարգված եւ պետական աջակցությամբ է ընթանում, քան մի քանի տարի առաջվա շինարարության հախուռն զարգացումը: Մյուս կողմից էլ՝ տնտեսության աճին նպաստում են գործարար միջավայրի բարելավման ուղղությամբ կառավարության քայլերը, որոնց վերաբերյալ Համաշխարհային բանկի Doing Business-2013 («Գործարարությամբ զբաղվելը») զեկույցում տրված գնահատականը 2012-ի հիմնական տնտեսական իրադարձությունը պետք է համարել:

### Հայաստանը ըստ Doing Business-2013-ի

Հիշեցնենք, որ ըստ այդ զեկույցի, Հայաստանը նախորդ տարվա համեմատ 18 կետով առաջընթաց էր գրանցել այս տարի եւ զբաղեցրել 32-րդ տեղը 184 երկրների մեջ: Առաջընթացի ցուցանիշներով Հայաստանի ցուցանիշը լավագույնն է ԱՊՀ երկրների մեջ, իսկ տարածաշրջանում երկրորդը՝ Վրաստանից հետո: Այս ցուցանիշները մեր երկրի պատմության մեջ լավագույնն են եւ պայմանավորված են ներդրումների, փոքր բիզնեսի շահերի պաշտպանության եւ այլ բնագավառներում արձանագրված լուրջ բարեփոխումներով:

### Արդյունաբերության զարգացումը իրագործման ընթացքում

Անցնող տարում կարեւոր նշանակություն ունեցող հաջորդ գործոնը արտահանման վրա հիմնված արդյունաբերության զարգացման ռազմավարության իրագործումն սկսելն էր: Հիշեցնենք, որ 2011-ին մշակված եւ հաստատված այդ ռազմավարությամբ ընտրվել է արդյունաբերության 11 ճյուղ, որոնց զարգացման ուղղությամբ պետություն-մասնավոր համագործակցությամբ պետք է իրականացվեն կոնկրետ միջոցառումներ: Ընտրված ճյուղերն են՝ կոնյակագործությունը, գինեգործությունը, պահածոների, հյութերի, ջրերի արտադրությունները, ադամանդագործությունը, ոսկերչությունը, ժամացույցների արտադրությունը, ճշգրիտ ճարտարագիտությունը, դեղարտադրությունը, տեքստիլ արտադրությունը: Ծրագրվում է, որ այս ռազմավարության իրագործումից հետո, 2015-ին վերոնշյալ ճյուղերի ապրանքների արտահանումը պետք է կազմի 700-900 մլն դոլար՝ ներկայիս 385 մլն դոլարի փոխարեն: Առաջին փուլի համար ընտրվել է 3 ճյուղ՝ կոնյակագործություն, դեղարտադրություն եւ ճշգրիտ ճարտարագիտություն:

2012-ին իրականացվեցին վերոնշյալ ճյուղերի զարգացման ոլորտային ռազմավարությունները եւ ձեւավորվեցին ինստիտուցիոնալ կառույցները: Դրանք են վարչապետին կից արդյունաբերական խորհուրդը, ինչպես նաեւ կոնյակագործության, գինեգործության, դեղագործության, ճշգրիտ ճարտարագիտության, ոսկերչության, ադամանդագործության, ժամագործության, թեթեւ արդյունաբերության ոլորտային խորհուրդները, որտեղ մեծամասնությունը կազմում են մասնավոր հատվածի ներկայացուցիչները: Ինչը նշանակում է, որ մասնավորի խոսքը որոշիչ նշանակություն է ունենում: Մշակվեցին նաեւ վերոնշյալ ոլորտների համար գործողությունների ծրագրերը եւ համապատասխան նախարարությունների հետ ստորագրվեցին համագործակցության հուշագրերը: Սկսվեցին մնացած ճյուղերի ռազմավարությունների եւ գործողությունների ծրագրերի մշակման աշխատանքները: Ռազմավարության իրականացման համար էլ արդյունաբերության զարգացման հիմնադրամին 2013-ի պետբյուջեով հատկացվեց 300 մլն դրամ: Ընդհանրապես, հարկ է նշել, որ այս ռազմավարության իրագործումը առաջիկա տարիներին եւս կարեւոր նշանակություն է ունենալու երկրի տնտեսության համար:

### ՏՏ բարձր աճ, «Հյուսիս-հարավի» եւ Մեղրու ՀԷԿ-ի սկիզբ

Եթե անդրադառնանք ավելի կոնկրետ իրադարձություններին, ապա հատկապես արժե ընդգծել տեղեկատվական եւ հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտի շարունակվող բավականին բարձր՝ ավելի քան 20 տոկոս աճը: Ներկայումս կապի հասանելիության, ինտերնետի տարածման եւ ոլորտի մյուս կարեւոր ցուցանիշների առումով Հայաստանը առաջատար դիրքեր է զբաղեցնում տարածաշրջանում՝ հակառակ մի քանի տարիներ առաջ եղած իրավիճակի եւ այս ոլորտի կտրուկ զարգացումը ամենաակնառուն է վերջին 3-4 տարիներին: Անցնող տարեվերջին Հայաստանում գործունեություն սկսելու մասին պայմանավորվածություն ձեռք բերվեց եւս մեկ ՏՏ միջազգային խոշոր ընկերության՝ «Ինտելի» հետ, ինչպես նաեւ հայկական շուկա մուտք գործեց ռուսական խոշորագույն «Ռոստելեկոմ» ընկերությունը:

Այլ ոլորտներից, 2012-ի կարեւոր տնտեսական իրադարձություններն էին «Հյուսիս-հարավ» միջպետական մայրուղու շինարարության եւ Մեղրու խոշորագույն ՀԷԿ-ի շինարարության սկիզբը, որոնցից յուրաքանչյուրը էական նշանակության կունենա ինչպես տվյալ ճյուղի, այնպես էլ երկրի տնտեսության զարգացման համար ընդհանրապես:

### Տնտեսական զարգացման սոցիալական անդրադարձը

Անցնող տարում տնտեսության մեջ արձանագրված, մեր գնահատմամբ ամենակարեւոր իրադարձություններն ու զարգացումները նշելով, կցանկանայինք շեշտել տնտեսական հաջողությունների հնարավորինս արագ անդրադարձի անհրաժեշտությունը բնակչության սոցիալական վիճակի վրա: Կառավարության առաջնահերթ խնդիրը պետք է լինի մեղմացնել սոցիալական բարձր բեւեռացումը, շարունակել բարելավել հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը եւ խրախուսել նոր եւ հնարավորինս բարձր վարձատրությամբ աշխատատեղերի ստեղծումը: Այլապես, տնտեսական աճի դրական արդյունքները կզգա միայն բնակչության սահմանափակ հատվածը:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

---

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

# Ռամկավար Ազատական կուսակցությունը աջակցում է Սերժ Սարգսյանին

*1-ին էջից*

Սերժ Սարգսյանի հետեւողական քաղաքականությունը Հայ դատի պաշտպանության բանագավառում հնարավորություն տվեց ընդլայնել Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչող երկրների աշխարհագրությունը եւ նպաստեց այդ հարցում սփյուռքահայ համայնքների գործունեության ակտիվացմանը:

ՌԱԿ Հանրապետական վարչությունը՝ հաշվի առնելով երկրի ներկա կացությունը, արտաքին եւ ներքին լուծման սպասող բազում հարցերի կարեւորությունը եւ ապագայում դժվարությունների հաղթահարման անհրաժեշտությունը, հայտարարում է.

2013 թ. նախագահական ընտրություններում պաշտպանում է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի թեկնածությունը եւ հնարավոր բոլոր միջոցներով սատարելու է նրա հաղթանակին ընտրություններում:

ա. ՌԱԿ-ը վստահ է, որ Սերժ Սարգսյանը կշարունակի ներքին մթնոլորտի մեղմանմանն ուղղված իր քաղաքականությունը:

բ. Տնտեսության մեջ կպահովի իրական մրցակցություն, ներդրումային բարենպաստ միջավայր, կաջակցի ՓՄՁ-ների գործունեությանը եւ մարզերի համաչափ զարգացմանը, ինչպես նաեւ վերջ կդնի օլիգոպոլ ծայրահեղական դրսեւորումները ՀՀ-ում ինչը կնպաստի արտագաղթի նվազմանը:

գ. Արմատախիլ կարվեն կոռուպցիոն եւ նմանատիպ այլ նեգատիվ երեւույթները, որոնք ներսից քայքայում եւ խաթարում են պետության բնականոն զարգացումը:

դ. Կշարունակվեն ավելի ամրապնդվել ու հզորանալ Հայաստանի Հանրապետության զինված ուժերը, որոնք իրենց մարտունակությամբ անվտանգության եւ խաղաղության երաշխիք են մեր տարածաշրջանում:

ե. ՀՀ-ում կիրականացվեն համակարգային նոր բարեփոխումներ, ժողովրդավարության, մարդու իրավունքների պաշտպանության, գենդերային հավասարության եւ խոսքի ազատության, քաղաքացիական հասարակության ինստիտուտների կայացման ու զարգացման համար:

զ. Կպահովվի հարկային եւ կառավարման այլ համակարգերի գործունեության արդյունավետությունը, կարվեն նմանատիպ այլ կարգի փոփոխություններ, որոնք կամրապնդեն վստահությունը եւ փոխադարձ կապը ժողովրդի ու պետական կառույցների միջեւ:

է. Առանձնահատուկ ուշադրություն կդարձվի գիտությանը եւ մշակույթին, ինչը կարեւոր է ժամանակակից աշխարհում պետության դիրքի ամրապնդման, ազգային ներուժի դրսեւորման եւ Հայաստանի հզորացման համար:

Ռամկավար Ազատական կուսակցությունը իր բոլոր հնարավոր միջոցներով սատարելու է ՀՀ նախագահի բոլոր այն նախաձեռնությունները, որոնք միտված են ՀՀ հզորացմանը, անվտանգության բարձրացմանը, Սփյուռք-Հայաստան հարաբերությունների բարելավմանը, Հայ դատի հետապնդմանը, ԼՂՀ հարցի արդարացի լուծմանը եւ հայ ժողովրդի համախմբմանը:

**ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ**

# Քաղաքականությունից հեռանալու օր

*1-ին էջից*

**Իսկ առաջին նախագահ Տեր-Պետրոսյանը հարցազրույց տվեց «Չորրորդ ինքնիշխանությանը», մասնավորաբար ասելով. «Իմ առաջադրմանը թեր եւ դեմ արտահայտվողների կողմից բերվում են հիմնավոր թվացող տասնյակ փաստարկներ, բայց շրջանցվում է փաստարկներից ամենահիմնականը: Որքան ինձ հայտնի է, դեռեւս ոչ ոք չի բարձրացրել այն հարցը, թե արդյոք սեփական ժողովրդին հարգող մարդը կարո՞ղ է վաթսունութ տարեկան հասակում հավակնել նախագահի պաշտոնին: Զարգացած ժողովրդավարական երկրներում սովորաբար այդպիսի բան տեղի չի ունենում... Ինչ կուզեք ասեք, 68 տարեկան մարդը նույն եռանդն ու աշխատունակությունը չի կարող ունենալ, ինչ 40-60 տարեկանը, որը թերեւս նախագահի պաշտոնին հավակնող քաղաքական գործիչների օպտիմալ տարիքն է: Հետեւաբար, ասպարեզ պետք է իջնեն ինձնից ավելի երիտասարդները»:**

**Ինչպես գիտենք, գործող նախագահ Սերժ Սարգսյանի թեկնածության առաջադրման մասին արդեն իսկ հայտարարել է Հանրապետական կուսակցությունը՝ իր վերջին, 14-րդ՝ արտահերթ համագումարում:**

**Սակայն, որքան էլ կարեւոր լինեն նախագահական ընտրությունները, այս նախատոնական օրերին քաղաքականությունը վերջին հետաքրքրականն է լինում: Ուրեմն ժամանակահատվածը, որքան էլ թեժ լինի ԿԸՀ-ում, քաղաքականությունից հեռանալու ժամանակահատվածն է, ճիշտ այնպես, ինչպես կարծես թե անում է առաջին նախագահը, ինչպես ՀԱԿ-ի համակիրներն են պնդում՝ «գեղեցիկ եւ տխուր»: Ի դեպ, 21 տարի առաջ, դեկտեմբերի 25-ին հեռուստատեսային ելույթով իր հրաժարականի ու հեռացման մասին հայտարարեց ԽՍՀՄ առաջին ու վերջին նախագահ Միխայիլ Գորբաչովը: Ի տարբերություն «արդեն ծերացող» Տեր-Պետրոսյանի՝ Գորբաչովը հեռանալու համար ուներ «սկզբունքային պատճառներ»: Այնուհետեւ ԽՍՀՄ առաջին ու վերջին նախագահը միջուկային զենքի կառավարման ճամպրուկը հանձնեց Բորիս Ելցինին ու հեռացավ Կրեմլից, որտեղ իջեցվեց ԽՍՀՄ պետական դրոշն ու բարձրացվեց ՌԴ պետական եռագույնը... Դժվար է ասել, թե ի՞նչ զարգացումներ կլինեն ՀԱԿ-ում Տեր-Պետրոսյանի հեռանալուց հետո, քանի որ անհնարին է պատկերացնել ՀԱԿ-ը, գոնե այս կազմով, առանց Լեւոն Տեր-Պետրոսյանի...**

**Այնպես որ, ուղղակի հեռանանք քաղաքականությունից, մանավանդ որ այնտեղից, ինչպես եւ ամեն տեղից, հեռացողներ եղել են ու այժմ էլ կան:**

# Լուսարձակի տակ

# Տարվա Top 10

*Արդեն երկրորդ տարին «**Ազգ**» օրաթերթը տարեվերջին ներկայացնում է այն անձանց տասնյակը, ովքեր տարվա ընթացքում հայտնվել են որեւէ սկանդալի կենտրոնում, եւ նրանց անձն ու գործողությունները առավել հաճախ են քննարկվել զանգվածային լրատվամիջոցներում: Այս ցանկում չեն հայտնվում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, վարչապետ Տիգրան Սարգսյանն ու Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանը, որոնց այցելությունները, ելույթներն ու հարցազրույցները հրապարակվել ու քննարկվում են ի պաշտոնե:*

## Top 10. Արմեն Աշոտյան VS Սուրեն Զոլյան



Նախարարն ընդդեմ ռեկտորի: Սա գարնանը քննարկված ամենաթեժ թեման էր: Ռեկտորը նախարարին հրապարակավ անվանեց ոչնչություն, հետո՝ ստախոս եւ վախկոտ, Աշոտյանն էլ նրան բարեկրթության դասեր տվեց: Նախարար-ռեկտոր վեճի արդյունքում Զոլյանը նախ նկատողություն, հետո խիստ նկատողություն ստացավ ու պաշտոնանկ եղավ: Սակայն սրանով կրթական ոլորտի ամենաթեժ սկանդալը չավարտվեց, բրյուսովցիները սկսեցին բողոքի ակցիաներ անցկացնել, բուհը բաժանվեց երկու հատվածի: Երկշաբաթյա դասադուլից հետո նախարարն այցելեց համալսարան, հանդիպեց ուսանողներին, սակայն դա էլ իրավիճակը չփրկեց: Երկար ժամանակ Զոլյանը դուրս չէր գալիս ռեկտորի իր սենյակից: Ստացվել էր իրավիճակ, երբ մեկ բուհում երկու ռեկտոր կար: Ավելի ուշ արդեն Զոլյանն ընդդեմ Աշոտյանի գործը հայտնվեց դատարանում: Տարվա ընթացքում Արմեն Աշոտյանն ամենահասանելի քաղաքական գործիչն էր: Օրվա մեծ մասը նա օնլայն է, գրում էր ստատուս, մեկնաբանում եւ կրթական խնդիրներից դուրս չէր զլանում պատասխանել նաեւ այլ քաղաքական ուժերին:

## Top 9. Փլորա Մարտիրոսյան



Տարվա ամենամեծ կորուստներից մեկը: Կյանքից անժամանակ հեռացած երգչուհի Փլորա Մարտիրոսյանի անձն ու գործողությունները նույնպես ամենաքննարկվածն էին: Տարվա ընթացքում բազմիցս լուսաբանվեց Փլորա Մարտիրոսյանի նախաձեռնած «Never again» համերգային նախաձեռնությունը, որը միտված էր Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը: Տարվա ընթացքում տիկին Փլորան Երեւանում համերգ տվեց, ասուլիս հրավիրեց, ինչն ամենաբուռն կերպով լուսաբանվեց: Ցավոք, տիկին Փլորայի մասին պետք է գրենք անցյալով: Նոյեմբերի 20-ին 55 տարեկան հասակում ԱՄՆ-ում կտրվեց նրա կյանքի թելն ու նա մեկնեց մշտական հյուրախաղի դեպի երկինք: Նրա ֆեյսբուքյան էջում հազարավոր ցավակցություններն էին, ափսոսանքի ու երախտիքի խոսքեր՝ ուղղված նշանավոր երգչուհուն:

## Top 8. Արթուր Աբրահամ



Հայազգի բռնցքամարտիկ Արթուր Աբրահամի գործունեությունն էլ չվրիպեց հասարակության եւ մամուլի ուշադրությունից: Այս տարի Աբրահամը չորս հաղթանակ է տարել՝ նվաճել եւ վերանվաճել WBO վարկածով միջին քաշային կարգում Եվրոպայի չեմպիոնի կոչումը, այնուհետեւ WBO վարկածով 2-րդ միջին քաշային կարգում նվաճել է աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Իսկ դեկտեմբերի 15-ին Ֆրանսիան ներկայացնող Մեհդի Բուադլայի դեմ մենամարտի 8-րդ ռաունդում Աբրահամը տեխնիկական նոկաուտով առավելության հասավ մրցակցի նկատմամբ: Գերմանական «Boxsport» ամսագիրը 3-րդ անգամ Աբրահամին ճանաչել է «Տարվա լավագույն բռնցքամարտիկ»: Բացի մարզական գործունեությունից՝ այս տարի Աբրահամը խաղացել է գերմանացի ռեժիսոր Թիլ Շվայգերի «Դեպքի վայր» ֆիլմում: Այն էկրան կբարձրանա 2013-ին. Աբրահամը մարմնավորում է հանցագործի:

## Top 7. Տարոն Մարգարյան



«Տարոն, սիրուն չէ»: Սա արտահայտություն է, որ շաբաթներ շարունակ տեղին ու անտեղի կրկնում էին բոլորը: Նորանշանակ քաղաքապետ Տարոն Մարգարյանի պաշտոնավարումը բուռն սկսվեց: Նախկին քաղաքապետ Կարեն Կարապետյանի հրաժարականից հետո Մարգարյանը պետք է ապացուցեր, որ խոստապահանջ է, կամքի ուժ ունի եւ կարող է հանրային շահը գերադասել մասնավորից: Հունվարին քաղաքապետը որոշում կայացրեց Աբովյան փողոցը էժանագին բուտիկներից ազատելու ուղղությամբ: Քաղաքապետի որոշմամբ ապամոնտաժված բուտիկները տեղափոխվեցին Մաշտոցի պուրակ, կտրվեցին մի քանի ծառեր եւ սկսվեց պատերազմ հասարակության եւ քաղաքապետի միջեւ: Սկսվեցին նստացույցեր, քննարկումներ, մամուլը գրեթե ամեն օր հոդված էր գրում Մաշտոցի պուրակի մասին, քաղաքապետարանից էլ ամենատարբեր մեկնաբանություններն էին տալիս, շատ հաճախ իրար մերժող ու հակասող: Ի վերջո հունվարի կեսերից սկիզբ առած բնապահպանական պատերազմը ավարտվեց գարնանը, խորհրդարանական ընտրություններից առաջ, երբ նախագահ Սերժ Սարգսյանը «անակնկալ» այց կատարեց պուրակ եւ հայրաբար երիտասարդ քաղաքապետին ասաց, որ նա ամեն ինչ լավ է արել, բայց դա սիրուն չէ, աչք չի շոյում, ու բուտիկները պետք է ապամոնտաժել: Շաբաթներ շարունակ համացանցը քննարկում էր բալետի պարուհու եւ քաղաքապետի հանդիպումը քաղաքապետարանում: Ֆեյսբուքում քաղաքապետի ու պարուհու լուսանկարներն ամենատարածվածն էին: Քաղաքապետի անունը կրկին շոշափվեց, երբ Ավանի թիվ մեկ ընտրատարածքում տեղի ունեցած ընտրություններում հաղթեց Ռոբերտ Սարգսյանը, որը քաղաքապետի աներձագն է:

## Top 6. Լեւոն Արոնյան, Սերգեյ Մովսիսյան, Վլադիմիր Հակոբյան, Գաբրիել Սարգսյան, Տիգրան Պետրոսյան եւ մարզիչ Արշակ Պետրոսյան



Այս տարի Ստամբուլում կայացած շախմատի համաշխարհային օլիմպիադայում Հայաստանի շախմատի հավաքականը փայլուն հաղթանակ տարավ եւ գրավեց առաջին հորիզոնականը: Մեր ընտրանին վերջին տուրում պարտության մատնեց Հունգարիայի հավաքականին, եւ Ստամբուլում մտքի հայ տաղանդների շնորհիվ բարձրացավ հայոց եռագույնն ու հնչեց օրհներգը: Նրանց օդանավակայանում դիմավորեց նախագահ Սերժ Սարգսյանը, այնուհետեւ նրանց պատվին համերգ կազմակերպվեց օպերայի բակում, իսկ ավելի ուշ՝ նախագահական նստավայրում տեղի ունեցավ ընդունելություն: Նախագահը Լեւոն Արոնյանին եւ Արշակ Պետրոսյանին պարգեւատրեց «Մեսրոպ Մաշտոց» շքանշանով, իսկ մյուս շախմատիստներին՝ Պատվո շքանշանով:

## Top 5. Միխայիլ Բաղդասարով



Տարվա ամենաշատ քննարկված ու քննադատված գործարարն ու կազմակերպությունը «Արմավիա» ավիաընկերությունն ու նրա սեփականատեր Միխայիլ Բաղդասարովն էին: «Արմավիա»-«Զվարթնոց» միջազգային օդանավակայան վեճն ու կուտակված պարտքերը ինչպես նախորդ, այս տարի էլ մամուլի ուշադրության կենտրոնում էին: Ավիաընկերության կուտակած պարտքերի պատճառով օդանավակայանն անընդհատ զրկում էր «Արմավիա»-ին թռիչքուղուց, ինչն առաջացնում էր հասարակության դժգոհությունն ու լուսաբանվում լրատվամիջոցներով: Հետո արդեն «Արմավիա»-ն եւ Բաղդասարովը հայտնվեցին լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում, երբ սիրիահայերը դժգոհեցին, որ Երեւան-Հալեպ տոմսը շատ թանկ է: Որոշ ժամանակ անց «Արմավիան դադարեցրեց թռիչքները դեպի Սիրիա: Տարեվերջին արդեն լուրեր էին պտտվում, որ «Արմավիա»-ն վաճառվում է: Բաղդասարովն այդ լուրը չի հերքել:

## Top 4. Ռուբեն Հայրապետյան



Տարվա ամենաբացասական անձնավորությունը: Այս անվանակարգում հաղթողը ԱԺ արդեն նախկին պատգամավոր, Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Ռուբեն Հայրապետյանն է: Հունիսին նրան պատկանող «Հարսնաքար» ռեստորանային համալիրում տեղի ունեցավ ողբերգություն: Հայրապետյանի աշխատողներն ու նրա անվտանգության աշխատակիցները ծեծեցին ռազմական բժիշկներին: Ծեծի հետեւանքով հիվանդանոցում 11 օր անց մահացավ ռազմական բժիշկ Վահե Ավետյանը: Կատարվածը բողոքի մեծ ալիք բարձրացրեց հասարակության մեջ, կազմակերպվեցին բողոքի երթեր, ցույցեր, մոմավառություն ոչ միայն ռեստորանի, այլեւ Հայրապետյանի տան դիմաց: Մամուլում գրեթե ամեն օր բացասական հոդվածներ էին տպագրվում Հայրապետյանի մասին: Նախկին պատգամավորը կանչվեց նախագահական նստավայր եւ Սերժ Սարգսյանից սաստվելուց հետո հայտարարեց, որ հրաժարվում է մանդատից: Գործը նախաքննող մարմինը Հայրապետյանին երկու անգամ կանչել է հարցաքննության, եւ պարզվել է, որ դեպքի օրը Հայրապետյանը ռեստորանում չի եղել: Ավելի ուշ Հայրապետյանը հարցազրույց տվեց «Նուվել դը Արմենի» թերթին, որից հետո նրա անձի շուրջը աղմուկը շատացավ: Այժմ դատարանում է ընդդեմ Հայրապետյանի մի գործ, որի շրջանակներում քաղաքացիական հասարակության մի քանի ներկայացուցիչներ, ովքեր պայքարում էին «Հարսնաքար»-ի դեմքի բացահայտման համար, դատի են տվել նախկին պատգամավորին՝ զրպարտության եւ վիրավորանքի համար:

## Top 3. Հենրիխ Մխիթարյան



Հայաստանի հավաքականի եւ Դոնեցկի «Շախտյորի» կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանը տարվա ընթացքում ամենաքննարկված անձանցից մեկն է: Նրա գեղեցիկ ելույթներն ու գոլերը հավաքականի եւ ակումբի կազմում ստիպեցին, որ հասարակությունն ու մամուլն առավել հաճախ խոսեն Մխիթարյանի մասին: Հենրիխը ճանաչվեց «Շախտյորի» լավագույն կիսապաշտպան եւ ընդգրկվեց աշխարհի լավագույն հարյուր ֆուտբոլիստների ցանկում: Հասարակությունը ցնծությամբ տոնեց Մխիթարյանի գոլը Իտալիայի հավաքականի դարպասին, եւ թեպետ մեր հավաքականը սեփական հարկի տակ պարտվեց աշխարհի փոխչեմպիոնին, սակայն լրատվամիջոցները ու հասարակությունը խոսում էին Հենրիխի խփած գոլի մասին:

## Top 2. Վարդան Օսկանյան



ՀՀ նախկին արտգործնախարար Վարդան Օսկանյանն էլ տարվա ընթացքում մամուլի ուշադրության կենտրոնում էր: Օսկանյանը թերեւս իշխանություններին ամենից ուժեղ քննադատող անձն էր: Տարվա սկզբից խոսակցություններ էին շրջանառվում, որ Օսկանյանը համալրելու է «Բարգավաճ Հայաստան» կուսակցության շարքերը: Որոշ ժամանակ անց Օսկանյանը դարձավ ԲՀԿ անդամ եւ ընդգրկվեց կուսակցության նախընտրական ցուցակում: Կուսակցության համաժողովում՝ նախագահ Սերժ Սարգսյանի ներկայությամբ, ամենաբուռն քննադատության ենթարկեց երկրի ներքին, արտաքին ու տնտեսական ոլորտները: Հետո արդեն Օսկանյանի անունը գրեթե ամեն օր մամուլի առաջին էջերում էր, երբ նախկին արտգործնախարարին մեղադրեցին փողերի լվացման մեջ: Մի քանի ամիս շարունակ Օսկանյանին հրավիրում էին ԱԱԾ՝ ցուցմունք տալու համար, նա գրեթե ամեն օր ֆեյսբուքյան իր էջում գրառումներ էր կատարում՝ մեղադրանքը որակելով քաղաքական: Աշնանը ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանի պահանջով խորհրդարանը կողմ քվեարկեց, եւ Օսկանյանին զրկեցին անձեռնմխելիությունից: Օսկանյանի գործն այս պահին նախաքննության փուլում է:

## Top 1. Գագիկ Ծառուկյան



«Բարգավաճ Հայաստան» կուսակցության առաջնորդ Գագիկ Ծառուկյանն այս տարի ամենաքննարկված անձնավորությունն էր: Նախընտրական քարոզչավի ժամանակ Ծառուկյանի թեման քաղաքական ու հասարակական շրջանակներում բուռն քննարկվեց: Խորհրդարանական ընտրություններից հետո «Բարգավաճ Հայաստանը» կոալիցիայի մաս չկազմեց, սակայն ընդդիմություն էլ չդարձավ ու խորհրդարանում վերածվեց այլընտրանքային ուժի: Մի քանի ամիս շարունակ հասարակությունն ու մամուլը քննարկում էին հարցը՝ առաջադրվելո՞ւ է արդյոք Ծառուկյանն առաջիկա նախագահական ընտրություններին: ԲՀԿ-ում գրեթե բոլորը հայտարարում էին, որ ԲՀԿ-ն պետք է սեփական թեկնածուով հանդես գա, եւ այդ միակ թեկնածուն Գագիկ Ծառուկյանն է: Հետո արդեն ամենաբուռն կերպով լուսաբանվում էր Ծառուկյանի հանդիպումը Եվրախորհրդարանի փոխնախագահի հետ: Սակայն հանդիպումներից քննարկումներից եւ կանխատեսումներից հետո Գագիկ Ծառուկյանը հայտարարեց, որ չի առաջադրվում նախագահական ընտրություններին եւ չի սատարում որեւէ մեկին: Ծառուկյանի այդ որոշումն էլ բուռն կերպով քննարկվեց ու լուսաբանվեց:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## Տարածաշրջան

ԶԿԱՄՈՒԹՅՈՒՆ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՁԵՎՈՎ

# «Նոր գաղափարներն» էլ չե՞ն բավարարում

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների տարածաշրջանային վերջին այցելությանը հաջորդած՝ այսպես կոչված «նոր գաղափարների» նկատմամբ ադրբեջանական կողմի ոգեւորվածությունը, որ արտահայտվում էր վերլուծական բնույթի մի ամբողջ շարք հրապարակումներով եւ «երկրորդ էշելոնի» գործիչների հարցազրույցներով, սկսել է տեղը զիջել ակնհայտ հիասթափությանը:

«Ազերթաջ» պետական գործակալությունը, որ, բնականաբար, արտահայտում է վարչախմբի տեսակետը, հրապարակել է մի «դիվանագիտական հուշաթերթիկ», ինչից կարելի է եզրակացնել, որ համանախագահների կողմից ներկայացված «նոր գաղափարները» բոլորովին էլ նոր չեն եւ վերաբերում են ուժի կիրառման բացառման, շփման գծից դիպուկահարների հետքաշման, պատահարների հետաքննության մեխանիզմներին առնչվող հարցերին: Այսինքն, միջնորդները հորդորում են հարգել բանակցություններում ձեռք բերված պայմանավորվածությունները, դրանք ամրագրել իրավական պարտադիր ուժ ունեցող համաձայնագրով եւ արդեն վստահության մթնոլորտում շարունակել երկխոսությունը:

«Ադրբեջանը, բնականաբար, երբեք նման անհեթեթ փաստաթուղթ չի ստորագրի»,- գրում է «Ազերթաջ»-ի մեկնաբանը: Նրա կարծիքով, «միջնորդների առաջարկությունը հենց այն է, ինչ իրականացնելու դեպքում իրավիճակը ռազմաճակատային գոտում տասնամյակներով կսառեցվի՝ ինչպես Կիպրոսում»:

Հերթական անգամ մեղադրելով միջնորդներին «անսկզբունքայնության եւ անհետեւողականության» մեջ, պետական լրատվամիջոցը գտնում է, որ «ուժի չկիրառման սկզբունքին զուգահեռ պետք է ամրագրվի նաեւ սահմանների անխախտելիությունը, պետությունների տարածքային ամբողջականությունը, ինչպես նաեւ՝ ժողովուրդների այնպիսի ինքնորոշումը, որը չի հակասում առաջին երկուսին, այսինքն՝ ինքնորոշում տարածքային ամբողջականության եւ սահմանների անձեռնմխելիության շրջանակներում»:

Ադրբեջանի պաշտոնական քարոզչությունը, սակայն, իրեն դավաճանած կլիներ, եթե թույլ չտար հերթական բացահայտ հիմարությունը: Այսպես, «Ազերթաջ»-ը գրում է, որ ենթադրյալ փաստաթղթում «պետք է հստակ սահմանված լինեն տարածքների փուլ առ փուլ ազատագրման, փախստականների եւ բռնի տեղահանվածների վերադարձի ժամանակացույցը եւ Ադրբեջանի սահմանադրությանը չհակասող քվեարկության ժամկետը»:

Վերջին ձեւակերպումը, որքան կարելի է հասկանալ, վերաբերում է ԼՂ ժողովրդի «ինքնորոշմանը»: Խնդիրն այն է, սակայն, որ պաշտոնական լրատվամիջոցը չգիտի, որ Ադրբեջանի սահմանադրությունը առհասարակ չունի «քվեարկության» վերաբերյալ որեւէ նորմ: Եվ միջնորդները դա գերազանց հասկանում են, ուստի ոչ ոք Արցախի ինքնորոշումը Ադրբեջանի սահմանադրության հետ չի կապում:

Բայց Ադրբեջանում իշխող վարչախումբը շարունակում է պնդել իրենը: Բանը հասել է նրան, որ «Ազերթաջ»-ը Հելսինկիի եզրափակիչ ակտն է «յուրովի մեկնաբանում» եւ փորձում շրջանառության մեջ դնել «ներքին ինքնորոշում» հասկացություն: Ըստ այդմ, ադրբեջանցի մեկնաբանը կարծում է, որ «ինքնորոշումը պետք է լինի Հելսինկյան եզրափակիչ ակտի 8-րդ հոդվածի շրջանակներում»:

Իսկ ի՞նչ է ասում այդ հոդվածը. «Մասնակից պետությունները կհարգեն ժողովուրդների իրավահավասարությունը եւ իրենց ճակատագիրը տնօրինելու իրավունքը՝ մշտապես գործելով ՄԱԿ-ի Կանոնադրության սկզբունքների եւ նպատակների եւ միջազգային իրավունքի համապատասխան նորմերի համաձայն, ներառյալ այն, որ վերաբերում են պետության տարածքային ամբողջականությանը»:

Սա «թարգմանաբար» նշանակում է, որ մասնակից պետությունները հարգում են ժողովուրդների իրավահավասարությունը եւ իրենց ճակատագիրը տնօրինելու իրավունքը, բայց փոխադարձաբար ձեռնպահ են մնում միմյանց ներքին գործերին միջամտելուց: Իսկ ինչ վերաբերում է ինքնորոշման իրավունքի իրացմանը, ապա «բոլոր ժողովուրդները միշտ իրավունք ունեն կատարյալ ազատության պայմաններում, երբ եւ ինչպես նրանք ցանկանում են որոշելու իրենց ներքին եւ արտաքին քաղաքական կարգավիճակը՝ առանց արտաքին միջամտության եւ սեփական հայեցողությամբ իրականացնելու իրենց քաղաքական, տնտեսական, սոցիալական եւ մշակութային զարգացումը»:

Ասված է շատ պարզ: Ավելին, 8-րդ հոդվածը եզրափակվում է այս շեշտադրմամբ. «Մասնակից- պետությունները հաստատում են ժողովուրդների իրավահավասարության եւ իրենց ճակատագիրը տնօրինելու (իրավունքի) հարգումը եւ գործուն իրականացումը՝ իրենց եւ բոլոր պետությունների միջեւ բարեկամական հարաբերությունների զարգացման համար, նրանք հիշեցնում են նաեւ այդ (ժողովուրդների իրավահավասարության եւ իրենց ճակատագիրը տնօրինելու) սկզբունքը որեւէ ձեւով խախտելու բացառման կարեւորությունը»:

Իսկ սա արդեն նշանակում է, որ ԵԱՀԿ անդամ պետությունների միջեւ բարեկամական հարաբերությունների զարգացման անկյունաքարը նրանց բոլորի կողմից ժողովուրդների իրավահավասարության եւ ինքնորոշման իրավունքի՝ վերը շարադրված ձեւով, հարգումն է: Եւ եթե որեւէ պետություն դա ոտնահարում է, ինչպես Ադրբեջանը՝ ԼՂ հանդեպ, ապա մյուսների իրավունքը, նույնիսկ՝ պարտականությունն է դրա՝ ինքնորոշման իրավունքի խախտման, բացառման քայլեր ձեռնարկել:

Միջնորդների «ներկայացրած նոր գաղափարները», այսպիսով, չեն բավարարում Ադրբեջանին: Ուստի «Ազերթաջ»-ի մեկնաբանը կարծում է, որ «ժամանակն է, որ Մինսկի խորհրդաժողովը հավաքվի եւ ընդունի կողմերին պարտադրող որոշում»: Եթե նկատի ունենանք, որ Թուրքիան եւս Մինսկի խմբի անդամ է, ապա թերեւս կարելի է ենթադրել, որ 2013-ի թուրք-ադրբեջանական «նախաձեռնությունները» լինելու են այդ ուղղությամբ:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Առաջիկա տարին չի կարող խոստումնալից լինել տարածաշրջանի համար

## *Քանի դեռ Վաշինգտոնը չի հրաժարվել «արաբական գարունը» ծառայեցնել սեփական քաղաքականության նպատակներին*

2013-ի շեմին հետահայաց անդրադառնալով ավարտվող տարվա իրադարձություններին, դրանցից թերեւս պետք է առանձնացնել խստաշունչ ձմռան վերածված «արաբական գարնան» սիրիական արձագանքները, Հունաստանում սկզբնավորված, ապա նաեւ Պորտուգալիայի, Իսպանիայի, Իտալիայի պես Եվրոմիության երկրներում տարածված ֆինանսատնտեսական ճգնաժամը, ԱՄՆ-ում նախագահական ընտրությունները եւ Գազայի հատվածում իսրայելական ագրեսիայի ձախողումից հետո ՄԱԿ-ում Պաղեստինին դիտորդ-պետության կարգավիճակի շնորհումը:

«Արաբական գարնան» սիրիական արձագանքների պարագայում խոսքը «Ազատ Սիրիայի բանակի» վարձկանների եւ նախագահ Բաշար Ասադի կառավարական զորքերի միջեւ ընթացող ավերիչ եւ արյունահեղ պատերազմի մասին է, որի վերջը, անկախ Արեւմուտքի իշխանափոխության նկրտումներից, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունի դիպուկ արտահայտությամբ՝ դեռեւս չի երեւում:

Կնշանակի՝ ռազմական գործողությունները Սիրիայում ամբողջ թափով կշարունակվեն նաեւ առաջիկա տարում: Եթե դրանք, ունենալով անկանխատեսելի բնույթ, չհանգեցնեն երկրում ուժերի հավասարակշռության փոփոխությանը, միեւնույն է, բերելու են տարածաշրջանում լարվածության հետագա սրման: Քանի որ տարածաշրջանային երկրներն ուղղակի կամ անուղղակի ներգրավված են Սիրիայում ընթացող ռազմական գործողություններում, իսկ միջազգային ուժերը քաղաքական զարգացումների նախաձեռնությանը տիրելու համար հետնաբեմից ուղղորդում են դրանց ընթացքը, ուստի այդ գործողությունները պատճառ են դառնալու, որ խորանա տարածաշրջանային երկրների բեւեռացումը ու անհաշտ բնույթ ստանա մեծ տերությունների՝ Սիրիայով պայմանավորված մրցակցությունը:

Թեեւ ԵՄ-ի ֆինանսատնտեսական ճգնաժամը սկզբնավորվեց այս տարի, սակայն դրա գլխավոր պատճառը Հունաստանի, Պորտուգալիայի, Իսպանիայի, Իտալիայի անհաշվենկատ կառավարումը չէ, այլ անկառավարելի դարձնելու համար եվրոպական այս կառույցն աննախադեպ ընդարձակելու ամերիկյան հաշվարկներն ու անդամակցող երկրների զարգացման մակարդակի տարբերությունները:

Այլ կերպ, ԵՄ-ի ճգնաժամի համար նախադրյալներ Վաշինգտոնի օրհնությամբ դեռեւս ստեղծվել էին անկախ զարգացման մակարդակից, քաղաքական նկատառումներով կառույցի մեջ նախկին սոցճամբարի երկրների ընդգրկմամբ: Պարզապես առկա ճգնաժամը սահմանափակել է Սիրիայի քաղաքական զարգացումներում ԵՄ-ի առավել ակտիվ ներգրավվածությունը, այնպես ինչպես նախագահական ընտրությունները՝ ԱՄՆ-ի պարագայում, դա միաժամանակ Սիրիայի շուրջը Ռուսաստանի հետ ծավալվող մրցապայքարում կաշկանդել է եվրոպական այս կառույցին:

ԱՄՆ-ի նախագահական ընտրություններում վերընտրվեց Բարաք Օբաման: Որքան էլ պաշտոնավարման առաջին ժամկետում նախագահ Օբաման նոր պատերազմ չսանձազերծի Մերձավոր եւ Միջին Արեւելքում, չունենալով ըստ երեւույթին դրա հնարավորությունը, որովհետեւ ֆինանսատնտեսական ճգնաժամ է ապրել նաեւ նրա երկիրը, այնուամենայնիվ, նա չի կատարել տարածաշրջանում լարվածությունը թուլացնելու դեռեւս 4 տարի առաջ տված իր խոստումը, ոչ էլ հաշտվել է իսլամական աշխարհի հետ:

Օբամային, ամենայն հավանականությամբ, հետաքրքրում էր ոչ այնքան տարածաշրջանի լարվածության թուլացումը, որքան ամերիկյան տարածաշրջանային քաղաքականության շարունակականության ապահովումը: Այդ նպատակով որպես արդյունավետ միջոց դիտարկվեց եւ շրջանառության մեջ դրվեց «արաբական գարունը»: Եթե այս գարունը ի սկզբանե վերածվել է խստաշունչ ձմռան, ապա դրա պատճառը ամերիկյան քաղաքականությունը առաջնահերթ նշանակությամբ Իսրայելի ազգային անվտանգությանը ծառայեցնելն է:

Ակնհայտ է, որ այսպիսի առաջնահերթ առաջադրանքով ամերիկյան քաղաքականությունը չէր կարող նպաստել տարածաշրջանում լարվածության թուլացմանը: Ավելին, չնայած Վաշինգտոնի եւ դաշնակիցների ջանքերին, ԱՄՆ-ն չկարողացավ նույնիսկ կանխել ՄԱԿ-ում Պաղեստինի դիտորդ-պետության կարգավիճակի հասնելը: Գուցե այդ կարգավիճակը անդամակցություն չի ենթադրում, սակայն անդամակցության ճանապարհին լույս է եւ անկախության նախադրյալներ է ստեղծում Պաղեստինի համար:

Օբամայի պաշտոնակալությունը նախատեսվում է հունվարի 20-ին: Հետեւաբար նա դեռ պաշտոնավարման 2-րդ ժամկետի համար որեւէ խոստում չի տվել: Սակայն ամերիկյան տարածաշրջանային քաղաքականության շարունակականությունը «արաբական գարնան» միջոցով ապահովելու Վաշինգտոնի առաջադրանքը, առավել եւս Իսրայելի անվտանգության առաջնահերթությունը այդ քաղաքականության մեջ անհնար է դարձնում լարվածության թուլացումը տարածաշրջանում:

Սա նշանակում է, որ առաջիկա տարում Վաշինգտոնը կրկին հետամուտ կլինի որդեգրած դիրքորոշմանը, Սիրիայում ռազմական գործողությունների ծավալմանը զուգընթաց, լարվածությունը տարածաշրջանում հետեւողականորեն կսրվի, կսրվեն տարածաշրջանային երկրների հարաբերությունները, իսկ դա կհանգեցնի տարածաշրջանում բեւեռացման հետագա խորացմանը: Այսպիսի իրավիճակում առաջիկա տարին չի կարող խոստումնալից լինել ինչպես տարածաշրջանի, այնպես էլ միջազգային հարաբերությունների համար:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

# Պապի տոնական ելույթը Վատիկանում



**Դեկտեմբերի 25-ին կաթոլիկները, լյութերականներն ու բողոքականները, ինչպես նաեւ ուղղափառ որոշ եկեղեցիներ նշեցին Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան տոնը: Կեսգիշերին Վատիկանի Սուրբ Պետրոսի տաճարում Բենեդիկտոս 16-րդ պապը մատուցեց տոնական պատարագ: Մինչ այդ նա իր աշխատասենյակի լուսամուտագոգին վառել էր ավանդական «խաղաղության մոմը»: 85-ամյա պապը իր հանդիսավոր ելույթում քրիստոնյա աշխարհին ծանուցեց Փրկչի գալստյան մասին: Իր քարոզի մեջ պապը խաղաղասիրության կոչ արեց աշխարհին: «Թող սպառազինություններին փոխարինեն տառապյալների համար նախատեսված ձեռնարկները», ասաց նա: Իր աղոթքում նա Բարձրյալին աղերսեց խելքի բերել նրանց, ովքեր անհրաժեշտ են համարում հանուն տիրոջ բռնության օգտագործումը:**

**Անդրադառնալով արդի քաղաքական իրողություններին, պապը աղոթեց, որ «իսրայելցիներն ու պաղեստինցիները կարողանան խաղաղ ապրել միասնական աստծո հովանու ներքո եւ ազատ պայմաններում»: «Մենք աղոթում ենք նաեւ հարեւան երկրների՝ Լիբանանի, Սիրիայի, Իրաքի խաղաղության համար», ավելացրեց նա: Պապը հույս հայտնեց, որ Սուրբ Երկրի քրիստոնյաները կկարողանան տարածաշրջանում պահպանել իրենց կացարանները եւ այնտեղ ապրել «մահմեդականների հետ փոխըմբռնման պայմաններում»:**

**Երեկ կեսօրին պապը Վատիկանի Սուրբ Պետրոսի տաճարի պատշգամբից հանդես է եկել «քաղաքին եւ աշխարհին» ուղղված ավանդական ուղերձով: Տոնի առթիվ նա հավատացյալներին շնորհավորեց աշխարհի 6 տասնյակ լեզուներով:**

## Ձեռքբերում

# «Հալալ է, թող ուրախ Նոր տարի էնեն»

### *«Մասաղիսի գործով» Շիրակի մարզի առաջին ատյանի դատարանի վճիռը՝ անցնող տարվա մի ձեռքբերում*

Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի ամենամեծ դահլիճում մեկ շաբաթ առաջ՝ դեկտեմբերի 18-ին տեղի ունեցածի տեսագրությունն իսկ օրեր հետո էլ դժվար է առանց հուզմունքի նայել: Այս ատյանը, կարելի է ասել, համարձակություն ունեցավ արդեն ինը տարի ձգձգվող, հանրապետության տարբեր դատական ատյաններով անցած «Մասաղիսի գործով» ամբաստանյալ երեք երիտասարդներին անմեղ ճանաչել եւ արդարացնել: Դատավոր Հարություն Մովսեսյանի ընթերցած այդ համարյա սենսացիոն վճիռն ընդունվեց ներկաների ծափահարություններով ու ընդհանուր ոգեւորության հուզախառն բացականչություններով:

Հիշեցնենք, խոսքը վերաբերում է 2003 թվականին ԼՂՀ Մասաղիսի զորամասում զինծառայողներ Հովսեփ Մկրտումյանի եւ Ռոման Եղիազարյանի սպանության չարչրկված գործին, որում մեղադրված նույն զորամասի նրանց նախկին ծառայակիցներ, գյումրեցիներ Ռազմիկ Սարգսյանի, Մուսա Սերոբյանի ու վանաձորցի Արայիկ Զալյանի նկատմամբ 2005 թվականից սկսած նախ 15 տարվա, ապա ցմահ ազատազրկման դատավճիռ էր կայացվել, տղաները 2 տարի 8 ամիս անցկացրել էին բանտում, ապա 2006 թ. դեկտեմբերին Վճռաբեկ դատարանի վճռով ազատ արձակվել դատարանի դահլիճից: Դրանից հետո գործն ուղարկվել էր վերաքննության, ապա 2008-ին մտել Շիրակի մարզի առաջին ատյանի դատարան, ու զարմանալիորեն՝ դարձյալ նույն մեղադրանքով: Միայն այս ամսվա սկզբին մեղադրող կողմը սպանության մեղադրանքը փոխել էր, նախկին երեք զինվորներին այժմ էլ մեղադրելով Ռոման Եղիազարյանին եւ Հովսեփ Մկրտումյանին դիտավորությամբ ծանր մարմնական վնասվածք հասցնելու մեջ, որն անզգուշությամբ հանգեցրել էր մահվան: Այդ հոդվածով երիտասարդներին սպառնում էր 7-8 տարվա ազատազրկում: Սակայն այդ մեղադրանքը եւս դատարանում չհաստատվեց:

Հանրապետության զինվորական դատախազն այսօր էլ ասում է («Շանթի» եթերով), թե նախաքննական մարմինն այս գործը քննել է պրոֆեսիոնալ բարձր մակարդակով: Մինչդեռ, ինչպես տեսնում ենք, այդ մարմինն այսքան տարի, մինչեւ մի քանի օր առաջ, պնդում էր եւ նույնիսկ Վճռաբեկ դատարանի վճռից հետո էլ չէր փոխել երեք երիտասարդներին ներկայացված մեղադրանքը. հենց սպանության մեղադրանքը, որից ինքն էլ ի վերջո ստիպված եղավ լուրջ եւ ակնհայտ հակափաստարկների ճնշման ներքո հրաժարվել, վերաորակավորել այն՝ փորձելով «փրկել» ինչ-որ բան: Այն բանում, որ դա եւս այս անգամ «չանցավ», թերեւս մեծ դեր խաղաց տվյալ քրեական գործի ստացած հասարակական, ընդհուպ միջազգայինի մոտեցող հնչեղությունը:

Անշուշտ, այս գործի հետ կապված առավել հիմնավոր հետեւություններ կարելի կլինի անել միայն այն ժամանակ, երբ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնի: Բոլոր դեպքերում «Մասաղիսի գործը» մնում է լիարժեք չբացահայտված, երկու զինվորների սպանության մեջ մեղավոր անձը կամ անձինք՝ տակավին չպատժված: Բայց կարելի է այդ եւ ընդհանրապես մեր դատական համակարգի բարելավման մինչեւ այժմ անհույս թվացող ճանապարհին արձանագրել մի կարեւոր դրական քայլ: Այն է՝ առաջին ատյանի դատարանը չենթարկվեց որեւէ արհեստական ճնշման եւ կայացրեց գործի ընթացքի տրամաբանությունից բխող ինքնուրույն վճիռ: Կցանկանայինք դա համարել անցնող տարվա մեր մի ձեռքբերումը:

Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դահլիճում երիտասարդներին արդարացնող վճիռը գոհունակությամբ էին ընդունել ոչ միայն ամբաստանյալները, նրանց հարազատները, այլ նաեւ իրավապաշտպանները, ներկա մյուս քաղաքացիները եւ նույնիսկ՝ սպանված Մկրտումյանի ծնողները: Վճիռը լսելիս մյուսների նման հուզվել էր նաեւ սպանված զինվորի հայր Մովսես Մկրտումյանը, որը հետամուտ է լինելու, որ իրական մեղավորը բացահայտվի ու պատժվի: «Ճիշտ է, իմ երեխան չկա,- ասում էր մահացած զինվորի մայրը,- բայց հիմա կարեւորը՝ էս երեք երեխեքը փրկվեցին»:

«Հալալ է, հալալ, Աստված ձեզ երկար կյանք տա... Ես գիտեի, որ արդարությունը հաղթելու է, ես գիտեմ, որ Հայաստանը էսպես չի մնալու...»,- սրանք էլ նախկին ամբաստանյալներից մեկի մոր խոսքերից են: Մեկ էլ ե՞րբ էին նման մի գործից հետո դատավորների հասցեին ասվել մայրական այսպիսի խոսքեր. «Թող իրանց համար բարի Նոր տարի լինի, թող Աստված իրենց օջախներն էլ օրհնի»...

**Գ. Մ.**

# Որակյալ կրթությունը՝ առաջընթացի գրավական

### *ՎիվաՍել-ՄՏՍ-ն 25 մլն դրամ է ներդրել կրթական 2 ծրագրի աջակցելու նպատակով*

Հայաստանի հեռահաղորդակցության առաջատար օպերատորը կարեւոր է համարում սերունդների կրթությանն ուղղված ջանքերը: ՀՀ կրթության եւ գիտության նախարարության հետ համագործակցությունն այդ տրամաբանության արդյունք է:

Երեկ ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխամասային գրասենյակում կայացած համատեղ ասուլիսում ներկայացվել են դպրոցների եւ բուհերի վարկանշավորման ուղղությամբ՝ Հայաստանում առաջին անգամ իրականացվող քայլերը: Ասուլիսին մասնակցում էին ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը, ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը, ՀՀ կրթության եւ գիտության նախարարի տեղակալ Կարինե Հարությունյանը եւ նախարարության զարգացման ծրագրերի եւ մոնիտորինգի վարչության պետ Ռոբերտ Ստեփանյանը:




Արդյունավետ կրթության վերաբերյալ վարկանիշի ձեւավորումը ներկայում իրականացվում է հասարակական կարծիքի հիման վրա, ինչը կարող է լինել նաեւ սուբյեկտիվ: Վարկանշավորման այդ եղանակը փոխարինվում է մասնագիտական մեթոդաբանությամբ: Այն, ի դեպ, արդեն մշակվել եւ հաստատվել է: Նման բարեփոխման հիմքում Հանրակրթության մասին օրենքն ու Բոլոնիայի գործընթացին ինտեգրվելու պահանջներն են:

Վարկանշավորման ազգային մոդել մշակելու արդյունավետ տարբերակը միջազգային լավագույն փորձի տեղայնացումն է: Հայաստանն ընդգրկված է այն 10-15 երկրների ցանկում, որոնք հավակնում են այդ նորարարության ներդրմանը: Տարվա ընթացքում մշակված գործիքները հաջորդ տարի փորձարարական եղանակով կներդրվեն եւ միայն դրա ավարտին՝ վերջնականապես կբանաձեւվի ամբողջ մեթոդաբանությունը:

Առաջին անգամ ներմուծվող այս գործիքները հավակնում են ստեղծել օբյեկտիվ հիմք՝ բուհերի եւ դպրոցների գործունեության գնահատման համար: Այն կարեւոր է հասարակության առջեւ հաշվետու լինելու եւ թափանցիկության ապահովման տեսակետից:

«Ժամանակակից աշխարհին հատուկ ինֆորմացիոն առատությունը պարտավորեցնում է գտնել որակյալ կրթություն ստանալու առավել արդյունավետ ուղիները: Երկրի մրցակցային առավելությունն ընդգծելու ամենախոստումնալից միջոցը գիտելիքն է: ՎիվաՍել-ՄՏՍ-ն կրթական նախաձեռնություններին աջակցել է հետեւողական պատրաստակամությամբ: Նպատակը՝ գիտական ներուժը երկրի առաջընթացին ծառայեցնել է »,-ասել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանը**:

ՀՀ բուհերի ազգային վարկանիշավորման համակարգը (մեթոդաբանություն, ցուցանիշներ, հաշվարկի մեխանիզմ) ներկայացրել է ՀՀ կրթության եւ գիտության նախարարի տեղակալ **Կարինե Հարությունյանը**, իսկ հանրակրթական ուսումնական հաստատությունների վարկանիշավորման համակարգը՝ նախարարության զարգացման ծրագրերի եւ մոնիտորինգի վարչության պետ Ռոբերտ Ստեփանյանը:


## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

**Հայտարարության սույն տեքստը հաստատված է բաց ընթացակարգի հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի «24» -ի թիվ 2 որոշմամբ եւ հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն Բաց ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԲԸԱՇՁԲ-13/1»**

Պատվիրատուն՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն, որը գտնվում է ք.Երեւան, Արշակունյաց 7 հասցեում, հայտարարում է բաց ընթացակարգ:

Բաց ընթացակարգում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ուջի համայնքի, Արարատի մարզի Լանջանիստ, Լանջազատ եւ Բաղրամյան համայնքների, Արմավիրի մարզի Վանանդ, Դալարիկ եւ Բամբակաշատ համայնքների, Գեղարքունիքի մարզի Աղբերք համայնքի, Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքի եւ Սյունիքի մարզի Նորավան համայնքի կադաստրային քարտեզների թարմացման աշխատանքների կատարման պայմանագիր (այսուհետեւ՝ պայմանագիր):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ բաց ընթացակարգի հայտեր կարող են ներկայացնել բոլորը, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բաց ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք դատական կարգով ճանաչվել են սնանկ, ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային եւ պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է, որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական գործունեության համապատասխանություն՝ պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ:

Հաղթող մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, որի հետ կնքվում է պայմանագիր:

Սույն ընթացակարգի հրավերը փաստաթղթային ձեւով ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին, մինչեւ հայտերի ներկայացման վերջնաժամկետը, որը հստակ սահմանված է **www.armeps.am** կայքում: Ընդ որում, փաստաթղթային ձեւով հրավեր ստանալու համար պատվիրատուին պետք է ներկայացնել գրավոր դիմում:

Գնումների բազային միավորի հիսնապատիկը գերազանցող գնումների դեպքում, հայտերը հայերենից բացի կարող են ներկայացվել նաեւ ռուսերեն եւ /կամ/ անգլերեն:

Ռուսերենով կամ անգլերենով բաց ընթացակարգի հրավեր ստանալու համար պահանջվում է վճար 300000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով, ընդ որում եթե բաց ընթացակարգի հրավերի թարգմանության, տպագրման եւ առաքման ծախսերը կազմում են ավելին, քան 300000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամը, հրավեր ստանալու պահանջ ներկայացրած անձը վճարում է նաեւ տարբերությամբ առաջացած գումարը: Եթե բաց ընթացակարգի հրավերի թարգմանության, տպագրման եւ առաքման ծախսերը ավելի քիչ են կազմում, քան 300000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամը, Պատվիրատուն պարտավորվում է վերադարձնել այդ տարբերությունը: Պատվիրատուն ապահովում է հրավերի տրամադրումն այդպիսի պահանջ եւ վճարի անդորրագիրը ստանալու օրվան հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում: Պատվիրատուի կողմից ռուսերենով կամ անգլերենով տրամադրված հրավերն ունի նույն իրավական ուժը, ինչ որ հայերեն հրավերը: Ռուսերենով կամ անգլերենով հրավերի եւ հայերեն հրավերի տարբերության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ մասնակցի:

Էլեկտրոնային ձեւով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում պատվիրատուն ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձեւով տրամադրումը դիմումն ստանալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Սույն հրավերով նախատեսված կարգով հրավեր չստանալը չի սահմանափակում մասնակցի՝ սույն ընթացակարգին մասնակցելու իրավունքը:

Բաց ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձեւով՝ **www.armeps.am** կայքում՝ մինչեւ դրանով սահմանված վերջնաժամկետը:

Սույն գնման գործընթացը իրականացվելու է էլեկտրոնային ձեւով՝ **www.armeps.am** էլեկտրոնային կայքի(այսուհետեւ՝ Կայք) միջոցով: Հայտերի բացումը տեղի կունենա Գնումների մասին ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ **www.armeps.am** կայքի միջոցով:

Սույն գնման գործընթացը իրականացվելու է էլեկտրոնային ձեւով՝ www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով:

Հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային գնումների ձեւով, ք.Երեւան, Արշակունյաց 7 հասցեում, 2013 թվականի փետրվարի 4-ին ժամը 14:00-ին:

Սույն ընթացակարգի վերաբերյալ բողոքները պետք է ներկայացնել Գնումների աջակցման կենտրոն՝ ք. Երեւան, Կոմիտասի 54/բ հասցեով: Բողոքարկումն իրականացվում է սույն հրավերի 1-ին մասի 12-րդ բաժնով սահմանված կարգով:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ սույն ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար, մասնակիցները պետք է պատվիրատուին ներկայացնեն սույն ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Աիդա Կարապետյանից:

**Հեռախոս՝010.544285: Էլ.փոստ՝gnumnercadastre@mail.ru: Պատվիրատու՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե:**

# Արսեն Ջուլֆալակյանը Հայաստանի լավագույն մարզիկ

*Լավագույն թիմը շախմատի Հայաստանի տղամարդկանց հավաքականն է*

Ավանդույթի համաձայն, մարզական լրագրողների հանրապետական ֆեդերացիան հարցում էր անցկացրել՝ որոշելու տարվա 10 լավագույն մարզիկներին: Քանի որ 2012-ը օլիմպիական էր, ուստի կարելի էր կանխատեսել, որ հանրապետության լավագույն մարզիկների եռյակը կկազմեն հենց Լոնդոնի ամառային օլիմպիական խաղերի մեր 3 մրցանակակիրները:

2012-ի Հայաստանի լավագույն մարզիկ է ճանաչվել հունահռոմեական ոճի ըմբիշ **Արսեն Ջուլֆալակյանը**: Հարցմանը մասնակցած 30 լրագրողների հարցաթերթիկներով Արսենը վաստակեց բոլորից շատ՝ 294 միավոր:

Մրցաշրջան 2012-ը որոշ հաջող էր Արսեն Ջուլֆալակյանի համար: 74 կգ քաշային ըմբիշը Եվրոպայի առաջնությունում դարձավ բրոնզե մրցանակակիր: Իսկ Լոնդոնի օլիմպիական խաղերում հայ ըմբիշը մեկը մյուսի հետեւից պարտության մատնելով մրցակիցներին, եզրափակիչում մրցեց աշխարհի չեմպիոն Ռոման Վլասովի հետ: Արսենը մոտ էր չեմպիոնի տիտղոսին, սակայն մրցակցին հաջողվեց պաշտպանվել ու վաստակած 2 միավորը պահպանել: Ջուլֆալակյանը բավարարվեց արծաթե մեդալով, որը եւս մեծ նվաճում է հայ ըմբիշի համար:






Երեկ կայացած մամուլի ասուլիսում Արսեն Ջուլֆալակյանը հետեւյալը նշեց. «Շնորհակալություն նման պարգեւի համար: Յուրաքանչյուր մարզիկի համար մեծ պատիվ է իր երկրի լավագույն մարզիկ ճանաչվելը: Դրանում շնորհակալ եմ ընտանիքիս եւ մարզչիս: Սա մի մեծ թիմի երկնաջան աշխատանքի արդյունք է: Ինձ համար տարին գերազանց էր: Իդեալական դառնալու համար չբավականացրեց միայն օլիմպիական ոսկե մեդալը: Հաջող տարի էր նաեւ անձնական կյանքում՝ ամուսնացա, ինչը շատ կարեւոր էր:

Իմ գլխավոր նպատակն է հաջորդ տարի նվաճել աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Իմ մեդալների հավաքածուում բացակայում են միայն աշխարհի առաջնության եւ օլիմպիական խաղերի ոսկե մեդալները»:

Լավագույն մարզիկների ցանկում 2-րդ տեղը 250 միավորով զբաղեցրել է հունահռոմեական ոճի մեկ այլ ըմբիշ՝ մինչեւ 96 կգ քաշային **Արթուր Ալեքսանյանը**: Մինչեւ Լոնդոն մեկնելն Արթուրն իրեն գերազանց էր դրսեւորել Եվրոպայի առաջնությունում՝ նվաճելով չեմպիոնի տիտղոսը: Իսկ օլիմպիական խաղերում հայ ըմբիշը դարձավ բրոնզե մեդալակիր՝ 3-րդ տեղի համար պայքարում գեղեցիկ ոճով հաղթելով կուբացի Էստրադա Ֆալկոնին:

Լավագույն եռյակը 226 միավորով եզրափակել է ծանրորդուհի **Հռիփսիմե Խուրշուդյանը**, որը Լոնդոնի օլիմպիական խաղերում 75 կգ-ից բարձր քաշայինների մրցավեճում երկամարտի 294 կգ (128+166) արդյունքով դարձել էր բրոնզե մրցանակակիր: Ընդ որում հայ մարզուհին իր անձնական քաշով զգալիորեն զիջում էր մյուս երկու մրցանակակրուհիներին: Ամառային 30-րդ օլիմպիադայում Հռիփսիմեն մեր մարզիկներից առաջինն էր, որ մեդալ նվաճեց:

4-րդ տեղում 203 միավորով հայ շախմատիստների առաջատար **Լեւոն Արոնյանն** է, որը գլխավորում էր Հայաստանի շախմատի տղամարդկանց հավաքականը Ստամբուլում կայացած շախմատի համաշխարհային օլիմպիադայում: Բացի թիմային հաղթանակից, Լեւոնը մեկ ոսկե մեդալ էլ նվաճեց 1-ին խաղատախտակի վրա ցույց տված լավագույն արդյունքի համար: Տարվա ընթացքում Արոնյանը հանդես եկավ մի քանի ուժեղագույն մրցաշարերում: Վերջերս Չինաստանում կայացած մտավոր խաղերի շախմատի մրցաշարում Արոնյանը հաղթող ճանաչվեց «կույր» շախմատում:

131 միավորով 5-րդ տեղը զբաղեցրել է մեր փորձառու հրաձիգ **Երջանիկ Ավետիսյանը**: Նրա համար տարին նշանավորվեց ստենդային հրաձգության Եվրոպայի չեմպիոնի տիտղոսի նվաճմամբ:

6-րդ տեղում ձյուդոյիստ **Հովհաննես Դավթյանն** էր, որը վաստակել է 97 միավոր: Նա Եվրոպայի առաջնությունում դարձել է արծաթե մրցանակակիր:

7-րդ տեղը զբաղեցրել է 95 միավոր վաստակած մեր ամենափորձառու գործող շախմատիստներից մեկը՝ **Վլադիմիր Հակոբյանը**: Նա եւս մեծ ներդրում ունեցավ մեր օլիմպիական հավաքականի մեծ հաջողությունում՝ 3-րդ անգամ արժանանալով ոսկե մեդալի:

74 միավորով 8-րդ հորիզոնականում է մարմնամարզիկ **Հարություն Մերդինյանը**: Նա մրցաշրջանում մի քանի մրցաշարերում հաջող մրցելույթներ ունեցավ: Ամենամեծ հաջողությանը Մերդինյանը հասավ Եվրոպայի առաջնությունում՝ նվաճելով բրոնզե մեդալ:

68 միավորով 9-րդ տեղում թաեքվոնդոիստ **Արման Երեմյանն** է: Կազանում կայացած վարկանիշային մրցաշարում գերազանց հանդես գալու շնորհիվ Եվրոպայի նախկին չեմպիոնը Լոնդոնի օլիմպիադայի ուղեգիր էր նվաճել: Լոնդոնում նա մոտ էր մրցանակակիր դառնալուն, սակայն մարզական բախտը երես էր թեքել հայ մարզիկից, որը բավարարվեց 5-րդ տեղով:

Լավագույն տասնյակը 64 միավորով եզրափակել է Հայաստանի այս տարվա լավագույն սամբիստ ճանաչված **Վաչիկ Վարդանյանը**: Նա հաջող մրցելույթներ ունեցավ աշխարհի եւ Եվրոպայի առաջնություններում՝ նվաճելով համապատասխանաբար արծաթե եւ բրոնզե մեդալներ: Կարծում ենք, որ այս ցուցանիշով Վաչիկը 10 լավագույնների ցանկում պետք է որ ավելի բարձր դիրք զբաղեցներ:

Բացի վերը նշված մարզիկներից, մարզական լրագրողներն իրենց հարցաթերթիկներում նշել են եւս 13 մարզիկների անուններ: Այդ ցանկում են ֆուտբոլիստներ Հենրիխ Մխիթարյանը, Յուրա Մովսիսյանը, Ռոման Բերեզովսկին, Սարգիս Հովսեփյանը, Արաս Օզբիլիսը, ազատ ոճի ըմբիշ Դավիթ Սաֆարյանը, սամբիստներ Մխիթար Մխիթարյանը, Տիգրան Կիրակոսյանը, հունահռոմեական ոճի ըմբիշ Յուրի Պատրիկեեւը, շախմատիստներ Գաբրիել Սարգսյանն ու Սերգեյ Մովսիսյանը, ծանրորդ Հայկ Հակոբյանն ու բռնցքամարտիկ Նիկոլ Հարությունովը:




Լավագույն թիմ է ճանաչվել շախմատի համաշխարհային օլիմպիադայի չեմպիոն Հայաստանի տղամարդկանց հավաքականը: 2-րդ տեղը զբաղեցրել է շախմատի կանանց «Միկա» ակումբը, որը նվաճել էր Եվրոպայի ակումբային առաջնության փոխչեմպիոնի տիտղոսը: Լավագույն եռյակը եզրափակել է Հայաստանի հունահռոմեական ոճի ըմբշամարտի հավաքականը, որը Եվրոպայի առաջնության թիմային հաշվարկում զբաղեցրել էր 3-րդ հորիզոնականը:

Այսօր «Օջախ» ռեստորանային համալիրում տեղի կունենա մրցաշրջան-2012-ում աչքի ընկած մարզիկների եւ նրանց մարզիչների պարգեւատրման արարողությունը: Դրամական պարգեւները մարզիկներին կհանձնի հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը: Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեն էլ իր հերթին կպարգեւատրի մարզիկներին ու մարզիչներին:

## Սեւյանը լրացրեց միջազգային վարպետի նորման

Լոս Անջելեսում ավարտված շախմատի «23-րդ Մետրոպոլիտեն» մրցաշարում մեծ հաջողության հասան 12-ամյա Սամուել Սեւյանը եւ նրա ավելի փորձառու հայրենակից Մելիքսեթ Խաչիյանը, որոնք 9 հնարավորից վաստակած 6 միավորով բաժանեցին 1-2-րդ տեղերը: Ընդ որում Սեւյանը 1,5 միավորով գերազանցեց միջազգային վարպետի նորման, որը լրացրեց 3-րդ անգամ: Նրան ընդամենը կես միավոր չբավականացրեց գրոսմայստերի նորման լրացնելու համար:

Ավարտական 2 տուրերում Սեւյանը 1,5 միավոր վաստակեց Ջանիբեկ Ամանովի եւ Վիկտոր Շենի հետ մրցախաղերում: Խաչիյանի մրցակիցներն էին Անդրանիկ Մատիկոզյանն ու Դարվին Յանգը:

## Անդրեասյանը հետապնդում է առաջատարին

Գրոնինգենի շախմատի մրցաշարի 4-րդ տուրը հաջող էր Զավեն Անդրեասյանի համար: Հաղթելով Դանիել Գորմալիին, Զավենը վաստակեց 3,5 միավոր ու հոլանդացի Ռոբին վան Կամպենի եւ հնդիկ Սապտարշի Ռոուի հետ բաժանում է 2-4-րդ տեղերը: 4 միավորով աղյուսակը գլխավորում է Սլովակիայի ներկայացուցիչ Պետեր Միչալիկը, որը 4-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց Թվան Բուրգի նկատմամբ: 3 միավոր ունի միջազգային վարպետ Միեր Հովհաննիսյանը, որը ոչ-ոքի խաղաց մակեդոնացի Ֆիլիպ Պանչեւսկու հետ: Հաշտություն կնքեց նաեւ Վահե Բաղդասարյանը, որի մրցակիցը բելգիացի Ստեֆան Բուկեմանն էր: Վահեն ունի 2,5 միավոր: Մարկ Բասենցյանը հաղթելով Ռոբի Կեւլիշվիլուն, վաստակեց 2 միավոր:

## Նախապատվությունը տրվեց Ռոջեր Ֆեդերերին

Իտալական Gazzetta dello Sport-ը հետաքրքրական հարցում էր անցկացրել՝ նվիրված աշխարհի վերջին՝ որոշելու բոլոր ժամանակների լավագույն մարզիկներին: Այդ տիտղոսին արժանացել է շվեյցարացի թենիսիստ Ռոջեր Ֆեդերերը, որը ստացել է հարցման մասնակիցների ձայների 14,8 տոկոսը: Ռոջեր Ֆեդերերը «Մեծ սաղավարտի» մրցաշարի 17-ակի հաղթող է:

2-րդ տեղում Արգենտինայի հավաքականի եւ իսպանական «Բարսելոնի» հարձակվող Լիոնել Մեսին է: Նրա օգտին քվեարկել է մասնակիցների 12,8 տոկոսը: Ֆուտբոլի արքա Պելեն ձայների 12,2 տոկոսով եզրափակել է լավագույն եռյակը: 4-րդ տեղում մեկ այլ լեգենդար ֆուտբոլիստ Դիեգո Մարադոնան է՝ 10,8 տոկոս: Գերծանրքաշային պրոֆեսիոնալ բռնցքամարտիկ Մոհամեդ Ալին 10,6 տոկոսով զբաղեցրել է 5-րդ տեղը:

## Քոթանջյանն առաջատարներից մեկն է

**Արաբական Միացյալ Էմիրություններում մեկնարկած շախմատի մրցաշարի 52 մասնակիցների թվում են գրոսմայստեր Տիգրան Քոթանջյանը եւ միջազգային վարպետ Կարեն Գրիգորյանը: Քոթանջյանը 3 տուրից հետո վաստակած նույնքան միավորով ուկրաինացի Եվգենի Միրոշնիչենկոյի հետ գլխավորում է աղյուսակը: Նա հաղթել է Հուսեյն Այադին, Մահմուդ Լոդհիին եւ Խալեդ Աբդելին: 2 միավոր ունի Կարեն Գրիգորյանը, որը հաղթել է Մոհամեդ Զաբեյբին ու Ամին Տաբատաբային, պարտվել Մարիա Մանակովային:**

## Ուկրաինացի լողորդի նվաճումը

**Սեւաստոպոլցի լողորդ, Ուկրաինայի ռեկորդների գրքում մի քանի ռեկորդներ գրանցած Օլեգ Սոֆյանիկը 2 անգամ հաղթահարել է Բոսֆորի նեղուցը: 20 կմ լայնությամբ հատվածը բատերֆլայ լողաոճով նա հաղթահարել է 5 ժամ 17 րոպեում: Իսկ Ստամբուլի եվրոպական եւ ասիական հատվածները միացնող հատվածում Սոֆյանիկը կապված ձեռքերով ու ոտքերով 3 կմ-ը հաղթահարել է 1 ժամ 57 րոպում: Ուկրաինացի լողորդը խոստացել է հաջորդ տարի լողալով անցնել Ատլանտյան օվկիանոսը:**

## Արշավինը հետաքրքրել է «Ռեդինգին»

**Լոնդոնի «Արսենալի» հարձակվող Անդրեյ Արշավինը հունվարին հավանաբար տեղափոխվի անգլիական մեկ այլ ակումբ՝ «Ռեդինգ»: Ակումբի ղեկավարությունը մտադիր է Արշավինի դիմաց «Արսենալին» 4 մլն ֆունտ ստեռլինգ վճարել: Իսկ ահա «Արսենալը» ցանկանում է նվազագույնը 5 մլն ֆունտ ստեռլինգ ստանալ այդ գործարքից: Դեռեւս այս ամսվա սկզբին էր Արսեն Վենգերն Արշավինին խորհուրդ տվել նոր ակումբ որոնել: Արշավինը վաղուց է կորցրել տեղը թիմի հիմնական կազմում:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ




Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 25.12.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: